



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ltd
✓ 1345



ԶՈՐՍ ՕՐԻՈՐԴ






Faint, illegible text or markings, possibly a title or label for the diagram above.



ԹԱՏԵՐԱԿԱՆ

Ի ԱՂ ՄԷ



ԶՈՐՍ ՕՐԻՈՐԴ

ԿԱՄ

ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐՔ

ԵՒ

ՈՒՍՈՒՄՆԱՏԵԱՑՔ



ՅՈՐԻՆԵԱՑ

ՆԵՐՍԷՍ Ս. ՄԻՋԳՈՒՐԵԱՆ



ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԻՒՐԳՅԱՆ

— 1862 —

980

v



41345-60

29. 1948

Յ.Ռ.

ՊԱՐԿԵՇՏԱՍՈՒՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՊԵՐՃ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՇԱԿԵՐՏՈՒ ՀԻՍ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍՈՒ

Ս. ՎԱՌՎԱՌԵԱ

ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ազնուաբարձյ Օրիորդք.

Թաղիս Թաղական խորհուրդին 1860 Յուն-
վար ամսոյ մէջ ընտրուելէն 'ի վեր, Ատենա-
պետ Իրիգորեան Ռսումնասէր Սիմօն Աղա-
յին կամօքն ու Յարգի անդամոց հաճութեամբ՝
ձեր է. մանչ տղայոց վարժարաններուն Ռ-
սումնական տնօրէնութեանց օգնական ըլլա-
լու պատիւն ունենայովս՝ մեծ պարտակա-
նութեան տակ տեսայ զիս, որով իմ անժա-
մանակ կոչմանս պատասխանելու էի. —
այն, անժամանակ, զի դեռ ժամանակն ու
անձնական զբաղմունքս չը ներէին սա տեսակ
ազգային գործոց մէջ մտնել. մանաւանդ, որ
պաշտօնս վարելու կարողութիւն պիտէր, թէ
է. եռանդն արդէն վառ էր սրտիս մէջ, սա
դրդմամբն ու համոզումով, թէ ամեն պարա-
գայի մէջ ինքզինքին միայն ծառայողը ան-
ձին գերի կը սեպուի: Մինչդէռ էս այս դիտա-
ւորութեան վրայ, անդէն մեծարգոյ Թաղական
խորհրդոյն խրախոյսն ալ թիկունք տայով նոր-
արժարժ եռանդիս, քաջայերեցին ձեր յառա-
ջադիմութեանը համար ձեռն տալ հարստատ
եղբօրս Պ. Մկրտչին, որ այս երկու դպրոց-
ներուն Հայկաբանութեան է. Տնօրէնութեան
ժանր պաշտօնը կը վարէ: Անձնանուիրաբար
այն օրէն սկսայ աշխատիլ է. կրնամ ըսել, որ

դէռ. պարտուցս մեծ մասը թերի մնացին. զի
ամեն Հայ դարու յատուկ եղած Ազգային յա-
ռաջադիմութեան անխիղճ ոսոխներուն սե-
հետքերը հանապազ խոջընդոտ գտայ շրջա-
նիս մեջ. այսու ամենայնիւ, փորձառութիւնն
օր քան զօր կը դրդէր զիս առանց վնասու-
թեան ընթացքս շարունակել: Ներեցէք ինձ, որ
հոս նիւթս քիչ մը շեղելով, այս խօսքերուն
սպրդելու տեղի տուի. բայց, կարծեմ ասոնց-
մէ ալ մասնաւոր օգուտ մը կրնաք քաղել: Եւ
անձ անտարբեր, յօգուտ հայ մանկտանն, մին-
չեւ ցարդ պաշտօնս կատարելագործելու ջան-
քիս ետեւեւ եղայ, եւ իրջափ բազմապատկե-
ցաւ ջանքս ու ինչ մեծ ուրախութիւն ազդեց
սրտիս, երբ ուսմանց մեջ ձեր անդուշանքն
ու առաքինութեան շուքը դիմելու իղձեր-
նիդ տեսնելու բարեբաղդ գտնուեցայ: Ուստի
անհրաժեշտ պարտք սեպեցի անանկ ծառա-
յութիւն մ'ընել, որ կարող ըլլայ ձեր ներկան
ու ապագան երջանկութեամբ բարօրել, ընտա-
նեացդ ու Ազգին ձեզմէ սպասուած յոյսն 'ի
դերեւ չը հանելով:

Ազնիւ Աշակերտուհիք.

Այն օրէն 'ի վեր երբ ծնողքնիդ ձեռքեր-
նուդ բռնած, բանականութեան կրթարանիս
սրահէն ներս զգօն դաստիարակաց եւ ուսում-
նամարզից խնամոցը յանձնեց, կարծեմ մինչեւ
ցայսօր բաւական ճանչցար մարդոյ պարտքը,

տգիտութեան սեւաթոյր շարժը մեկդի նետե-
լով, սկսաք տեսնել բարոյական յուսաւորու-
թիւնը. գիտնալ ձեր սեռին համար ուսմանց
եւ գիտութեանց ամենակարեւոր ըլլալը. գիտ-
նալ, որ խորհելու կարողութիւն ունեցող եա-
կին քրեական մեղսագործութիւն կը սեպուի
միտքն անմշակ թողուլը. վերջապէս աշխար-
հըս բնութեան կրթարանն ըլլալով, բնութեան
մեզի տուածները, գիտցաք որ պետք է դըպ-
րոցներու, կրթարաններու մեջ կարգադրենք ու
բարեկարգենք. զի լոկ բնութիւնը կարող չէ
մեր մարդավարութիւնն ուղղել, որուն ուսու-
ցածները միայն զգացման միջոցով են, եւ բը-
նականը դրականով կը հաստատուի. ուստի
պետք է դիմենք վարժարաններու, չը մնալով
զուրկ բարոյական կրթութենէ: Ահա ասոնց
կարծեմ վեր 'ի վերոյ տեղեակ ըլլալ սկսած
էք. եւ այս սկզբնաւորութիւննիդ դիտելովս է,
որ փութացալ Ռուսմասիրութեան եւ Ռուսմ-
նատեցութեան նկարագիր մը տալ ձեզի. կամ
լաւ եւս ըսենք ժամանակիս Ազգային Օրիոր-
դաց բարոյական վիճակը յատկապէս ձեզի
յայտնել, որ ուսման քաղցրահամ ճաշակը առ-
նույ սկսած էք, ամենէն յառաջադեմը գըտ-
նուելով վարժարանիս մեջ:

Արդ. սոյն երկասիրութիւնս կը ներկայացնէ
ձեզի, առաքինի հօր մը իր միակ զաւկին
դաստիարակութեան համար տուած իմաստուն

խրատները, ուսմանց մեջ յառաջադիմութեան
 պատուերները. նոյն առարիւնութեան զաւկին
 ուսմանց վրայ ունեցած անշեջ սերը, բարո-
 յական կրթութիւնը, մարդկային հաւասարու-
 թեան, իրաւանց եւ պարտուց վրայ տուած
 փաստերը, հարստութեան կակուղ բաստեռանց
 վրայ փափկութեամբ փայփայվող տգետ օրիոր-
 դի մը դէմ ուսումնասիրութեան համար տուած
 ապացոյցները, տգիտութեամբ սնած օրիորդին
 ուսումնատեցութիւնն ու անկիրք բնաւորու-
 թիւնը. հոս կը տեսնէք հարուստի տգետ զաւ-
 կին համամիտ նորասեր ընտանեաց զաւկին
 Ազգային բարուց եւ մայրենի լեզուին դէմ ու-
 նեցած ատելութիւնը եւ վերջին աստիճան օտա-
 րասիրութեան տենչը. վերջապէս հոս կը ներ-
 կայանայ Ուսումնասեր եւ միանգամայն դժբաղդ
 օրիորդ մը, ճշմարիտ բարեկամ առաջին աղջ-
 կան. սքանչելի միաբանութիւն մը, ընկերական
 սեր մ'ու հաւատարմութիւն մը իրարու մեջ.
 դժբաղդ ըսինք, զի ծնողաց նախապաշարմանը
 զոնուած, դեռ փոքրահասակ մեծցեր է ըսե-
 լով կը մերժի դպրոցէն մատաղահաս եւ նոյնա
 զաւակը. թերի թողլով իր բոլոր դասերը, բաժ-
 նուելով միանգամաւ երկու սրտակից բարեկամ
 դպրոցական ընկերութենէ. մէկ խօսքով՝ զըր-
 րոյկս համայնացոյց պատկեր մ'է արդի օրի-
 որդներուն բարոյականութեանը. որունց ճշմար-
 տութեանը դուք այ կը վկայէք անշուշտ. եւ փոք-

ճը ամեն օր ձեր եւ մերձակայիցը վրայ տեսնելով, կարծեմ ազատութեամբ ինծի հետ պիտի կրնաք ըսել, որ ազգային մանկութեան գիտուն եւ տգետ մնալուն պատճառ ծնողք են, մանաւանդ մայրերը, որոնց շրթունքեն կախում ունի ազգութեան լուսաւորութիւնը. բայց անհղ, որ եղուկներու կետեր շարել պետք կըլլայ հոս . . . :

Ապա ուրեմն, հայկաճգն Օրիորդք. քննութիւն ընենք անգամ մը մեր ժամանակին վրայ. գիտնանք, թէ անդէկ նաւերնիս ծովին ուր տեղուանքը կը թափառի, եւ այեաց շարժմամբն այսպէս մինչեւ երբ եւ ուր պիտի դիմեաշխատինք ճար մը գտնել անոր դէկը շինելունորոգենք, մինչդէռ գարուն ե եղանակը, հեզ ե հովիկը, պայծառ ե երկինքը, փութանք օր մ'առաջ, ժամ մ'ետքը գալիք փոթորկին դիմ դնելու, անգութ այեաց հարուածներով զանիջը փշրել ե գերեզմաննիս անհուն ովկիանոսի մը անդունդին մէջ ջը բանայ: Ուր որ այ ըլլանք ազգութեանց սեպհական երկնատուր ժառանգութիւնը հետերնիս ե, երկրիս ճր կողմերն այ թափառիւնք, մայրական կաթին հետ, մայրական լեզու մ'այ կ'ստանանք, եւ մեր ձեռքն ե զանի զարգացնելը. մեր կորուստին փոխարէն միայն այն լեզուն կը մնայ այսօր բովերնիս. անոր միջնորդութեամբը, անոր յառաջադիմութեամբը կարելի ե որ գտնենք այն կորուստը:

Երկինք ամեն կողմանէ անմխիթար չը բողոք խոսմբ մը տխրագգեաց ժողովուրդ. քէ է. ժամանակի մը համար հայրենիքը կ'առնու, բայց մայրենիքը, այսինքն լեզուն, սիրելի լեզուն, հայախօս լեզուն իրեն մխիթար կը բողոք:

Ազնիւ Օրիորդներ. դնք, գերեզմանին Դմօտեցող գնալիք ազգին տեղը նոր է. մատաղ ազգ մը կազմողներն էք. ապագան ձեզի կ'ըսպասէ, ձեր վրայ դրած է իր բարօրութեան բոլոր յոյսը. աղէ հապա. ժամանակ է հնճոց, ժամանակ մշակութեան, ժամանակ վերջապէս անխոնջ աշխատութեան. էրէ այս քնքարացրով յառաջ քայլէք, արդէն ապագան պատրաստ է առաքինութեան անման պսակներով պճնել ձեզ. բայց նոյն փառքին արժանանալու համար այսօրուցնէ առաքինութիւնը ծլելու է ձեր մատաղ սրտին մէջ, որոնց ամենուն ալ ուսուցիչը լեզուն է, Հայ լեզուն:

Եւ անմ էրկասիրութիւնս իր պարզ ոճովը լեզուի կրթութեանն ալ կարծեմ բաւական ծառայութիւն պիտի կրնայ ընել, զոր աւելի զուարճալի ընելու համար, յարմար դատեցի Թատերական խաղի կերպարանք մը տալ անոր. վասն զի Թատերական խաղերը, որ մարդկային զանազան տեսակ բնատրութիւնները կը ներկայացնեն, անշուշտ նուազ օգտաւետութիւն չունին մեր կրթութեանը. Թատրոնը նայելի մ'է, ուր ամեն մարդ քէ իր է աշխար-

հի մեջ գտնուած մարդաց վարմունքին պատկերը կը տեսնէ: Եւ արդ, վստահ եմ որ հաճութեամբ ընդունելով փոքրիկ գրքոյկս, ձեր աշխատութիւնը չեք զլանար անոր տեսարանը ներկայացնելու ընկերացդ եւ ծնողաց առաջ, խրախոյս տալով եւ ինձ, որ Ազգիս մանկրտւոյն համար աւելի օգտաւետ հեղինակութեանց ձեռնամուխ ըլլալու կարողութիւն ըստանամ:

Ես անձնանուէր Երիտասարդ սիրելի Ազգիս,

ՆԵՐՍԷՍ Ս. ՄԷՉՊՈՒՐԵԱՆ

Առ դուրս Գումգաթուի,

4 Փետրիար 1862.



ԴԵՐԱՍԱՆՈՒՅԻՔ

1. ՍԱՆԴՈՒԽՏ. Ուսումնասեր.
2. ԱՍՏՂԻԿ. Ուսումնատեսաց.
5. ԶԱՐՈՒՀԻ. Աստղիկին համամիտը.
4. ՍԱԹԻՆԻԿ. Սանդուխտին սրտակից բրկմը:

ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻՔ

ԱՌԱՋԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. ԵՒՊՐԱՔՍԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ.
2. ԱԿԻԻԼԻՆԷ ՍԱՐԳԻՍԵԱՆ.
5. ՄԱՔՐՈՒՀԻ ՍԱՐԳԻՍԵԱՆ.
4. ԱԿԻԻԼԻՆԷ ՄՍՐՏԻՐՈՍԵԱՆ.

ԱՇԱԿԵՐՏՈՒՅԻՔ

ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. ՓԵՐՈՒԶԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ.
2. ՀՆԱՐԻԱ ՄԱՐԿՈՍԵԱՆ.
5. ԱՐՏԵՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ.
4. ՄԷՆՏՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.

Տեսարանին երկու արարուածն այլ պարզ սը-
րան մը կը ներկայացնեն:

ՀՈՐՄ ՕՐԻՈՐԴ



ԱՌԱՋԻՆ ՏԵՍ

ՍԱՆԴՈՒԽՏ, մինակ, հօրք նամակք ձեռքը:

Երջանիկ կեանք, Մանկութեան հասակիս
մէջ ուսման աշակերտութենէս 'ի վեր, ահա
այս առաջին անգամն է, որ կարդալ գիտնա-
լուս համար մեծ ուրախութիւնս կ'ըզամ, աշ-
խատութեան մ'արդիւնաւոր պտուղք կը վայե-
լեմ: Ի՞նչ երանութիւն է զաւկի մը, երբ
հօրք սիրոյն արժանի, անոր պաշտպ մութեա-
նը տակ բարի դատտիարակութիւնս: 'ստանայ
Այս կողմէն գոնէ դժբաղդ չը գտնուեցաւ Սան-
դուխտ երկրի վրայ. զուրկ չը մնայ բանակա-
նութեան ամենակարեւոր պիտոյքէն: Աննայս
մէջ ամենաքաղցր օրս այսօր է. ուրախանամ
արդ. մտնամ տխուր անցեալս. երջանիկ է Սան-
դուխտ. բացուէ սիրտ:

Ո՛հ, հայր մը անողորմ բազդին ձեռքը խա-
ղալիկ, աշխարհի տարժան գործառնութեանց

մէջ անգամ մտքէ չը հանէ օրդին . գիշեր
ցերեկ անոր ապագան բարօրելու եւ միտքն
ուամամբ բարդաւածելու միջոցներ կը մտածէ .
հաս մանաւանդ այս անգամ յՆրեւան ըրած ճամ-
բորդութիւնը , որ դժուարակնճիոն գործի մը
համար էր , դարձեալ չէ մոռցած զիս խրատա-
տու նամակովը մխիթարել . Արժանի , սուրբ
հայրութեան :

Թող վկայ կենայ Նրկինք , որ հայրասպան մը
կը սեպուիմ , եթէ իր քաղցր պատուէրներուն
դէմ անհաւատարմարար շարժելու ըլլամ . իրեն
կը պարտաւորիմ կեանքս մինչեւ ցմահ :

Վճարելի տոմսակ մ'է այս նամակն իմ ձեռ-
քըս , զոր օր մ'առաջ վճարելու եմ մարդկու-
թեան պարտատէրին . ոչինչ հատուցում . — Ինչ
է , հաղարաւոր դահեկան , շահն ալ , — երբէք .
այլ , — ինչ որ բանականութիւնը կը պա-
հանջէ :

Ահա ասոնք կը պարունակեն տարազիր հօրս
նամակը : Սիրարոյր նամակ . չեմ համարձակիր
համբուրել իր սիրազիծ տողերը , (նամակը բեր-
նին մօտեցնելով) վախնալով որ գուցէ բառ
մ'աւրուի :

Ո՛հ , որչափ որ կարգամ փափաքս առնու-
անհետար է :

Այնեմ երթամ սրտակից ընկերուհիս Սաթի-
նիկը անանեմ . յուսամ , որ քիչ ուրախութիւն
ազդած չը պիտի ըլլամ նամակիս գալստեան

Քարի լուրը հաղորդելով : Սրտիս գաղանկիքը
միայն անոր կրնամ յայտնել , որուն պէս ճշմա-
րիտ բարեկամ մ'ալ ճարել դժուար է . բաւա-
կան փորձ եղայ գլխիս եկած փորձանքներէն . . . :

Այլ անն Աստղիկը որ կուգայ : (Աստղիկը
նշմարելով) Հը սիրեցի գնաց սա Յրիորդը , ան-
կիրթ ու զղուեցուցիչ բարքին համար . նամակս
պահեմ , (նամակը ծալելով գրպանը կը դնէ) զի
տեսածին պէս անշուշտ պիտի բռնադատէ որ
կարդամ , ես ալ չեմ կրնար սուտ մ'ստեղծել .
մանաւանդ որ չար նախանձութիւն մ'ունի գլխա-
ցինին վրայ . եւ սնտոի բաներու համար ու-
նեցած հետադրքութեամբը , եթէ ոչինչ բան
մը սեպելով քաշէ պատռէ , անկէց ետքը մեռ-
նիլն ինծի համար բան մ'ըսել չէ : Իցէ թէ շուտ
երթար , երես տալու չը գար :



ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍ

ՍԱՆԴՈՒԽՏ ՈՒ ԱՍՏՂԻԿ

ԱՍՏ: Բարեւ Սանդուխտ :

ՍԱՆ: Եւ քեզ Աստղիկ (ցած ձայնով) :

ԱՍՏ: Ք/թիդ տակէն ածականաւոր Աստղիկ հէ-
տա ինչ խոժոռ պատկեր է . որ մը չեղաւ որ
իննդում երես տեսնեմ քեզ . դառամեալ ծերերու
նման ծանր եւ խորթ շարժմունք մ'ունիս :

ՍԱՆ: Թեթեւադիպութիւն չը սովրեցայ դեռ .
մարախա ալ չեմ որ ցաթկուտեմ :

886 / 1988

ԱՍՏ: Ինձի համար է կերպարանափոխութիւնդ՝
ՍԱՆ: Թէպէտ ո՛չ, (ցած ձայնով) քայց ան-
կասկած եղիր:

ԱՍՏ: Մէկ հանր՝մ մ'ալ չէի արժեր. բե-
րանդ առաջ չը դնանց:

ՍԱՆ: Չորին մէջ ինչ որ խօսիս, անոր արձա-
գանքը կը լսես:

ԱՍՏ: Լեռն ենք:

ՍԱՆ: Քեզի համար:

ԱՍՏ: Սանդուխտ ինձի նայէ:

ՍԱՆ: Աչքս քեզի է:

ԱՍՏ: Աղէկ գիտես որ, քու աստիճանէդ վեր
մէկը կը սեպուիմ:

ՍԱՆ: Ատ աստիճանը ո՞ր վանքին մէջն առիր:

ԱՍՏ: Հարուստի զաւակ ըլլալովս, պէտք է
ինձի հետ մարդահաճութեամբ վարուիս. ճամ-
բան իս տեսածիդ պէս, թէ որ բարեւ տամ,
գետին խոնարհելով առնես. քայլ առած ժա-
մանակս ետեւէս դաս. երբ տունդ գամ, դուռն
իջնես. ես նստիմ, դու կանգնիս. ես հրաման
տամ, դու երրորդին անկիւնը քաշուելով ծըն-
կան վրայ նստիս. խօսակցութիւնդ երկիւղա-
ծութեամբ ու ցած ձայնով. որպէս զի տեսնո-
ղը վրաս մե՛ծ համարում ունենայ. հասկըցանք:

ՍԱՆ: Քեզի ո՞վ ըսաւ որ Սանդուխտը գերիդ է:

ԱՍՏ: Դուռն իմ ծառաս չես սեպուիր:

ՍԱՆ: Ո՞ւր է իմ տէրս ըլլալու նշանդ:

ԱՍՏ: Իմ շուքս բաւական է. անն զարդո՞ւ ու

Պատարութիւնս 'ի նշան մեծութեանս ուստի
մեծարելու ես զիս :

ՍԱՆ: Եւ ոչ չափէն աւելի զի քեզ պաշտե-
լու համար չեմ ստեղծուած :

ԱՍՏ: Քանի որ հարուստի զաւակ չեա, ինծ-
մէ ստորին կարգի մէկը կը սեպուիս :

ՍԱՆ: Չարաչար կը սխալիք : Մարդկային
ազգն ինչպէս որ համաձեւ ու մի եւ նոյն զգա-
յարանքով յաշխարհ կուգան, այսինքն, ես եր-
կու ազանջով, մէկ բերնով ծնած, դու, երեք
ազանջով, չորս աչքով, երկու բերնով չեա
ստեղծուած, այլ Աստուծոյ մեծագործ ձեռաց
արդարութեան մի եւ նոյն կազմութեամբը,
երբէք, ինչպէս դու ինծմէ, անանկ ալ հա-
րուստը աղքատէն գերաստիճան մէկը չը սեպ-
ուիր Աստուծոյ առաջ եւ մարդկութեան մէջ :
Վասն զի մարդկութիւնն աշխարհ մտած ժամա-
նակը որ եւ իցէ աստիճանէ ալ ըլլայ՝ լոկ մերկ մար-
մին մ' ունի իր հետը. մարդավարութեան մէջ պա-
տիւր սոսկ հարուստին համար չէ տրուած. ա-
սով, չքաւոր աղքատի մը բարեկիրթ որդին
աւելի սիրով յարգելու կը փափաքիմ, պաշիւ-
կը համարիմ, քան թէ քեզի պէս անկիրթ հա-
րուստի մը անկիրթ զաւակը :

ԱՍՏ: Ատ ինչ յանդուգն համարձակութիւնս,
անկիրթ մի. ասանկ կը սովորեցնեն զիշեր ցե-
բեկ ճգնաւորի պէս կարգացած զիրքերդ :

ՍԱՆ: Այո ասանկ կուսուցնեն, քով որ ու-

դածը խօսի չուզածն ալ կը լսէ . եւ ինչ որ չես
ուզեր ուրիշն ընէ քեզի , նոյնը մ'ընէր դուն
ալ ուրիշին ք :

ԱՍՏ: Ատ ինծի համար չէ :

ՍԱՆ: Ի՞նչ պատճառաւ :

ԱՍՏ: Ես ատանկ շինծու խօսքերու ականջ
անդամ չեմ դներ :

ՍԱՆ: Իրաւունք ունիս շինծու է ըսելու .
վասն զի ո՛չ ծնողէդ , առ եւ ասոր նման բա-
րոյական մը լսած ես , եւ ո՛չ դպրոցի մէջ ա-
շակերտած , որ կարելի է Ս. Աւետարանը Քե-
րականական վերլուծման համար ձեռքդ առնե-
լով յա խօսքին հանդիպելիք , թէ , « Չամենայն
որ միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մար-
դիկ , այնպէս արարէք եւ դուք նոցա » :

ԱՍՏ: Ատ խօսքն ինծի համար չէ , որովհե-
տեւ իմ վիճակիս չը յարմարիր . մանաւանդ քե-
զի պէս ստրուկ օրիորդի մը քով . թէ որ ինծի
պէս հարուստի մը դաւակ ըլլայիր , կարելի է
ան ատեն առ խօսքը հաւասարակչութիւն դրա-
նէր մէջերնիս . բայց հիմայ , — ամենեւին ո՛չ :

ՍԱՆ: Ծիծաղելի՛ փաստ :

ԱՍՏ: Խելքիդ դէմ գալուն ծիծաղելի կըլլայ :

ՍԱՆ: Ո՛չ միայն իմ այլ եւ գրեթէ բոլոր աշ-
խարհի եւ մարդկային օրինաց ալ դէմ է . Աստ-
ուածային օրէնք մը հարուստի դակի մը հա-
մար ոչինչ սեպուի . սարսափելի խօսք . հա-
բուստ մը՝ կրնայ եղեր ըստ հաճոյից երկնային

հրաման մը ուրի տակ առնել, կը դողան շրթ-
թունքս աս խօսքն արտասանելու: Բայց դար-
ձեալ հոգ չէ չը մեղադրուիր, բարեկիրթ կամ
անկիրթ դաւակ մը, ծնողացը հայելին կը սեպ-
ուի, հասարակ ժողովուրդէն մէկը հարուստին
քով, ստրուկ անձ մը համարուի:

ԱՍՏ: Միթէ անանկ չէ. Աստուած ձեզի պէս
մարդիկը չը տիրելուն աղքատութեան մէջ թողած
է:

ՍԱՆ: Բէհ ուղղադատութեանդ. թէ որ իդա-
կան սեռին քաղաքական պաշտօններ յանձնե-
լու սովորութիւն կը լաւ ըլլար, անշուշտ ար-
ժանի պիտի ըլլայիր Արդարութեան եւ իրաւանց
ժողովին Նախագահ ընտրուելու, մանաւանդ
որ հարստութեամբ մեծ յարմարութիւն ունիա,
կարելի է համբաւ ալ:

ԱՍՏ: Չը հաւնեցար:

ՍԱՆ: Ի՞նչ կայ չը հաւնելու. ամեն սիրտ ալ
կրնայ վիշակել, որ ան ատեն աղքատն օրական
ապրուստն անգամ ճարելու մեծ դժուարու-
թիւն կը կրէր. վասն զի, Աստղկան խօսքին
հայելով, աշխարհիս երջանկութիւնը, արդա-
րութիւնն ալ յարմար տեղը, եւ պատիւը, տե-
սակ մը հարուստներուն համար է. Աւելորդ է
յիշել, որ իշխանութեանդ օրովը, գրեթէ բո-
լոր դաւառներն աւաղակի որս կըլլային. զի ար-
դարութեան կշիռը ձեռքդ, ուղածիդ պէս կըր-
նայիր թեթեւցընել ու ծանրցընել. բայց օրէն

ՔՐ . — անոր ալ յարմարած կէտերը , — բացար-
ձակ անօրէնութիւն : Մոռցանք ըսելու , որ Անգ-
ղիոյ Թագուհւոյն ժառանգորդ ըլլալու արժանի
մէկն ես :

ԱՍՏ: Կը ծաղրես իս :

ՍԱՆ: Ճշմարտութեան սրտէն կը թօսիմ :

ԱՍՏ: Օրիորդ դու , ես ատանկ ճշմարտու-
թիւն մշմարտութիւն դիրքի լեզու չեմ հասկնար :

ՍԱՆ: Ձեր յարգութեանն առաջ դորձածուե-
լու լեզուն դեռ չստեղծուեցաւ , քանի մ'օր
ալ սպասեցէք :

ԱՍՏ: Բարկութեան տեղի կը տաս կոր ինծի :

ՍԱՆ: Չգուշացէ՛ք , չըլլայ որ բարկութեան
տաքութիւնը գլուխդ ցատկելով շար կիրքերդ
արթննան եւ ինծի ալ վնաս մը հասցնես :

ԱՍՏ: Կանգներ առաջս , օրական հայ . թըժ-
վար . երջանկութիւն , արթար , քավար , օրէնք ,
եւ դեռ շատ մը չըլտուած խօսքեր կը շարդէ :

ՍԱՆ: Անոր համար է որ ճամբու չը կրցինք
բերել ու բերելիք ալ չունինք :

ԱՍՏ: Իս կանոնի տակ ձգել կուզես , չը դի-
տես որ ազատ մէկն եմ ես :

ՍԱՆ: Այո , ազատ ես ու բնականապէս ա-
զատ ստեղծուած , ինչպէս եւ բոլոր աշխարհ .
բայց Աստուծոյ առ մարդկային ազգն շնորհում-
ներն ինչպէս որ չափով ու սահմանով տրուած
մէն , անանկ ալ ազատութիւնը , որն որ սահմանէն
դուրս ելածին պէս , լքութիւն կը սեպուի :

Ազատ ես, ասկայն ոչ թէ երկնադիր օրէնքի մը համար ականջս չը մանէր եւ ատոնք իմ վիճակիս չեն յարմարիր ըսելու:

ԱՍՏ: Ականջ բեր, որ ասանկ ստակ չընելու խօսքերն ալ մտիկ ընէ (մէկուսի):

ՍԱՆ: Բայ ըսեմ քեզի, որ հասկընաս:

ԱՍՏ: Թէ որ կուզես ըսելիքդ ծածկոցով մը գոցէ ու անկէց ետեւ սկսէ խօսիլ:

ՍԱՆ: Արդարեւ այս օրինակ թանձր տգիտութեանդ եւ անվայել վարմունքիդ համար է, որ երբէք չեմ ախորժած քեզի հետ կենցաղավարիլ. եւ ահա, մոլար դրութենէդ քեզ հեռացընելու եւ նախապաշարեալ մտքիդ սեւ ամպերը փարատելու համար կատիպուիմ քանի մը խօսք գրուցել:

ԱՍՏ: Վայ եկեր է մեր գլխին, դեռ նոր կըրակըսի խօսելու (մէկդի): Խօսէ տեսնենք:

ՍԱՆ: Վասն զի համազգեաց գտնուելովդ կը ցաւիմ, գութս կը շարժի քեզի պէս դեռահաս օրիորդի մը վրայ, որ իրաւանց պարտուց եւ օրինաց հրահանգներէն, անուսումնութեամբ զրկուած ըլլալով՝ մեծապէս կը մեղանչէք. եւ որով աշխարհիս մէջ այն ամեն բանը որ մարդկութիւնը կը պահանջէ քեզի համար ոչինչ կը սեպուի:

Արդ. հրաւանց սկզբնական հիմը հաստատուած է սա խօսքին վրայ, թէ & ինչ որ կուզես ուրիշն ընէ քեզի, նոյնը ըբէ դուն: ալ ու

րիշին, եւ մ'ընեւր այն բանն ուրիշին, զոր հետ
ուղեր ուրիշն ընէ քեզի » :

ԱՍՏ: (Մեկուսի) Ես ալ դիտոցայ թէ իմ խել-
քիս յարմար բան մը պիտի գրուցէ . ինչ որ
քիչ մ'առաջ, մի եւ նոյն հիմայ ալ : Տեսնենք :

ՍԱՆ: Ամեն վիճակի մարդիկ իրաւանց այս
ակգրունքով կընկերանան մարդկութեան, աղ-
գութեան, եւ ընկերութեան մէջ, ուրիշ կը
ծագի սրբազան պարտք մը՝ իրարու հետ վար-
ուելու : Թէ որ ես պարտաւոր եմ քեզ մե-
ծարեւ, դուն ինչ իրաւունքով կը յանդգնիս
իս քու քովդ ծառայ մը, սարուկ մէկը սե-
պելու . ինչ որ ես, նոյնն եւ դու : Ահա հոս
իրաւանց եւ պարտուց ճշմարտութիւնը հաս-
տատուելով, կ'ըլլայ սրբազան օրէնք . օրէնք՝
ընդհանուրին համար ալ . մէկ են նաեւ հարուս-
տին, աղքատին, եւ ամեն վիճակի մարդկանց
օրէնքը . թագաւորներն անգամ իրենց իշխա-
նութեան գաւազանովը կը խոնարհին օրինաց
առաջ . օրէնքն է թագաւորը, թագաւորն օ-
րինաց գործակատարը, դէտը կը սեպուի, ուր
մնաց որ ժողովուրդին մէջէն քեզի պէտք տգէտ
անհատ մը, թէ եւ ծանր ալ թուի քեզի :

ԱՍՏ: Ահրջապէս ըսելիքդ մն էր . ապէտ
մի . լիբը մ'ըքեզ :

ՍԱՆ: Անունովդ ապրիս :

ԱՍՏ: Քու խօսքդ բանի տեղ չը գնողը, տը-
գէտ կ'ըլլայ եղեր, մն ալ ըսած օրէնքներուդ
մէջ գրուած է :

ՍՍ.Ն: Թէ որ տղէտ չէք, պէտք չէր այդչափ
բարկանայ եւ այսօր երկնային հրամանի մ'օրի-
նազանց դանուխլ, եւ եթէ տղէտ էք, խօսածնիդ
ականջնիդ լսելու է եւ չը դիտցած բանիդ վը-
ճիւռ տալ չըլլար, մանաւանդ որ չը դիտնալն
ամօթ չէ այլ սովրելու չը փափաքիլը:

Ս.ՍՏ: Հիմայ երթալ տղայ ըլլալու, վարժա-
պետին առաջ ծնրադրելով, առ ըսած շատ մը
խօսքերդ սովրելու է փարարան կըսէք ինչ
կըսէք անոր մէջ:

ՍՍ.Ն: Քու խելքդ ալ փարայէն 'ի վատ ու-
րիչ բանի չը հասնիր:

Ս.ՍՏ: Գուն առնք սովրելովդ մը տեղդ
մեծցեր է:

ՍՍ.Ն: Չեռքս հինգ կանգուն, հասակդ չափե-
լու չափ (ձեռքը դէպ 'ի Սատղիկին գլխուն եր-
կընցընելով):

Ս.ՍՏ: Երկնքի բոլոր շնորհքը, խելքը, գըլ-
խուդ պտուկին մէջ լեցուեր է:

ՍՍ.Ն: Տգիտութիւնդ կշռելու չափ:

Ս.ՍՏ: Ինչ հարատութիւն կրցեր էք դիգել:

ՍՍ.Ն: Պաշարատ է հայրս ընտանիք մը լիտ-
վին պատասպարելու:

Ս.ՍՏ: Իմ հայրս մէկ ձեռքով մարդրաի պէս
կը շարէ հազար սակին:

ՍՍ.Ն: Այո, անցեալ օր խօսքը կը պարտէր,
թէ սեւ ծով ճանապարհորդող նաւի մը մէջ
մեծագուամար ծրար մը ծովը վայելեր է:

ԱՍՑ: Ատի մեղի համար բան մ'ըսել չէ :

ՍԱՆ: Եւ ի հացայ, որ յուսահատութենէն չափազանց օղի խմել սկսեր է :

ԱՍՑ: Ատ քու գիտնալու բանդ չէ :

ՍԱՆ: Տեղի տուիր ըսելու :

ԱՍՑ: Արժանի չես դեռ իմ աղայ հօրս մեծ անունը բերանդ առնելու եւ ո՛չ թէ . . . :

ՍԱՆ: Չը կրցինք հասկըցընել, որ աշխարհի մէջ մեծութիւնը բաժնու էրկինք ալ հասնի, վաղանցուկ է, ջրի մօտ՝ աւաղի վրայ տուն կանդնելու կը նմանի. այն մեծութիւնը վերջապէս խաչնարած հովուին եւ մութացող աղքատին հետ մէկ անկողնոյ մէջ պիտի պառկի մէկ, գերեզմանի մէջ պիտի թաղուի, վերջապէս սեւ հողի մը տակ :

ԱՍՑ: Աստուած չընէ այն օրը, բայց միթէ կարողութիւն չունինք փառաւոր սնտուկով մը վիճափոր գերեզմանի մէջ թաղելու :

ՍԱՆ: Ոսկիով աւ գոհարեղէններով ալ թաղես, դարձեալ ըլլալիքը հող է. ինչպէս որ պիտի ըլլանք, ես, դու եւ ընդհանուր մարդկային ազգը : Մարդու հարատւութիւնն աւ մեծութիւնը աշխարհի վրայ թողուցած բարեգործութիւնը, առաքինի կամ չար յիշատակն է որ նամահ կը մնան յերկինս ու յերկրի. աղէկ գիտցած եղիւր որ հարատւութիւնն աւ աղքատութիւնը երկնատուր փորձաքարներ են արարածոց վրայ. փորձելու համար, թէ արդեօք հարուստը պիտի կըր-

Կանց իր չափը ճանչնայ, պիտի մտածէ, որ ինչ-
 պէս ըսինք ամեն բան վաղանցուկ է. եւ յա-
 ուաջ քարոզն երբեմն ետեւն ալ նայելու է: Հա-
 րատութիւնը անուածեւ կլորիկ մետաղի մը
 վրայ հիմնուած է, որ միշտ կեցած տեղէն սը-
 պրդելու վրայ է: Հարատութիւննին ոչինչ եւ
 պարապ ու անպէտ բաներու համար վատնողները
 շուտով վտանգի տակ կիջնան, հազարաւոր օ-
 րինակներ ներկայ են մեր առաջ: Ասի այսպէս:
 Նմանապէս աղքատութիւնը. չըսենք աղքատ
 մը, այլ ողորմութեան անկարօտ մէկը, եթէ
 իրմէ թշուառ մէկին վրայ նայելով իր վիճա-
 կին հետ բաղդատութիւն ընէ, լայն եւ հարուստ
 է աշխարհ անոր համար. բայց թէ որ հարուս-
 տի մը վրայ նայելու ըլլայ, անշուշտ շատ նեղ
 պիտի գտնէ զաշխարհ. ուրեմն ասոնք գիտնա-
 լով, կարծեմ ձեր վրայ հպարտութիւն մը կը
 բերու չէք, որով գիտացիննիդ ձեր քովստրուկ
 մէկը սեպուի:

ԱՍՏ: Մանդուխտ:

ՍՍՆ: Ականջս քեզի է:

ԱՍՏ: Չարժէիր ատ կարդալը սովբելու, որ
 իս պղտիկ ձգել կուղես:

ՍՍՆ: Մեծցող մարդը անհնար է որ անգամ
 մ'ալ պղտիկնայ, մինչդեռ աճման ենթակայ է:

ԱՍՏ: Ըսել կուղեմ, թէ ինչ որ ըսի, խօսքս
 դանակի պէս կտրեցիր, իս համոզելու մտքով.
 Բայց աղէկ նայէ ինձի, ես ան Աստղիկն եմ:

դուն ալ առ . . . Սանդուխտն ես :

ՍԱՆ: Ըսածդ անանկ ճշմարտութիւն մ'է ,
զոր ոչ ոք կրնայ ստել . — այն , դու մի եւ նոյն
տգիտութեամբ մտորեալ Աստղիկն ես , եւ դժ-
ուար է այդ սեւ կեանքին մէջ ծնողին ու մեծ-
ցողին՝ բանականութեան պէտք եղած կարեւո-
րութիւնը ճանչել . ու անոր սիրովն սպրիլ ,
այսինքն գիտութեան մէջ մեռնիլ :

ՍՍՏ: Գիտութիւնն ինչ է , մանաւանդ աղջ-
կանց համար :

ՍԱՆ: Այո՛ , ոչինչ է միայն քեզիպէսներուն :

ՍՍՏ: Կարդալը սոսկ տեսակ մը մանչ տղա-
յոց կը վայլէ , որոնք կրօնաւոր ըլլալու միտք ու-
նին . ինչ , քարոզիչ վարդապետ պիտի ըլլաս :

ՍԱՆ: Այո՛ , քարոզով խրատելու համար քեզի
համանները , որ առ չար խելքին վրայ չը մնա-
լէն 'ի դատ , ես ալ անդարձ կեանքս այն սեւ
ախտով կը մաշեցընեմ :

ՍՍՏ: Բաւական է , որ աղջիկ զաւակն օր մը
սովրի դերձանն ասեղէն անցունել , մատնոցը
մատը դնել , մկրատը ձեռքն առնել , կերպան
առաջը փռել , եւ իրեն համար ձեւաւոր հա-
գուստ մը կարել ու կարել :

ՍԱՆ: Աս ըսածներուդ բոլորն ալ շուկան Հը-
րէից քովն անգամ կը գանտին . բայց անոնք
ալ գիտութեան արդիւնքն ըլլալէն 'ի դատ ,
դարձեալ ձեւաւոր հանդերձ մը շինելն ալ ու-
սումնական արհեստի կը կարօտի :

ԱՍՏ: Չը կրցինք վերջապէս տա գիտութիւնը
քերնէդ վար առնել, ուտելու բան է:

ՍԱՆ: Անկէց ալ ախորժելի եւ քաղցրահամ
բան չըլլար համն առնողին:

ԱՍՏ: Ո՞վ կը ծախէ. ո՞վ է գնողը:

ՍԱՆ: Աղբիւրը կը վազէ, ապիրը դէմ գնող
ըը կը լեցնէ:

ԱՍՏ: Չարմանալու բան, աղջիկ գաւազներն
ալ կարդալ սովբին:

ՍԱՆ: Վասն զի անոնք մարդ չեն:

ԱՍՏ: Ամեն մարդ ալ գիտէ, որ աշխարհս կար-
դալ գիտցողներէն պիտի կործանի:

ՍԱՆ: Կարդալ չը գիտցողներն ալ տակը պի-
տի մնան: Ուստի եկուր համողութիւն, կարելի է
աշխարհս մեր օրովը կործանի, դու ալ տակը
չը մնաս: Արդարեւ գութս կը շարժես վրադ.
մէկդի սրակէ, թո՛թուէ սա տգիտութեան քո-
ղը, որ հոգւոյն աչքը կը կուրցնէ:

ԱՍՏ: Կոյրը դուն ես որ բաց աչքերս չես
տեսներ:

ՍԱՆ: (Մեկուսի) Ո՛հ. ցաւ է ինձ, որ վերջապէս
մեր խօսքերը օգուտ մը չունեցան. մեր բոլոր խը-
րատն ու համողումը, հովին դէմ բամպակ գը-
ղել, եւ տակը ծակ տակառին մէջ ջուր
լեցնել եղաւ: Օ՛րիորդ, ձեր կեանքը լուսաւոր
սենեկին մէջ աչք կասուկ խաղալու կը նմանի:
Նւ արդ անճնապաշտութեանդ սիրուն ըլլայ,
եւ տեղդ դնան:

ԱՍՏ: Կը վռնտնա իս :

ՍԱՆ: Ո՛չ , Բայց գործիս արդեւք պիտի ըլլաս :

ԱՍՏ: Գեռ ժամանակը կանուխ է :

ՍԱՆ: Ինծի համար իրիկուն կը սեպուլի :

ԱՍՏ: Քոյր Սանդուխտ :

ՍԱՆ: (Մէկուսի) Արժանացանք վերջապէս
քոյր ըսուելու : Խօսեցէք :

ԱՍՏ: Գիտէք , ինչո՞ւ համար եկայ :

ՍԱՆ: Ոչ , բայց ինչպէս որ ձեր հանապազօր-
եայ սովորութիւնն էր :

ԱՍՏ: Տունը սիրտս նեղանալով , լսեցի որ
զուարճութեամբ թուղթ մը կը կարդաք . եւ
ինչպէս որ գիտէք , ես ալ անանկ զուարճալիք-
ները շատ սիրելուս , հետաքրքրութիւնս իս նե-
ղեց , որ դամ հասկնամ . եւ անո՞ղ կարդայիք
մտիկ ընէինք . այնչափ անծանօթ մէկն էի , որ
իս տեսածնուղ պէս այն թուղթը դրսպաննիդ
խօթեցիք :

ՍԱՆ: Կաղաչեմ , ատանկ ոչինչ առաջարկու-
թիւններ մ'ընէք , կարծածէ՞դ շատ հեռի է
կարդացածս , մանաւանդ . դադտուկ :

ԱՍՏ: Ինծի համար դադտնիք կրնանք ըլլալ :

ՍԱՆ: Ա՛յ խօսքն անկրթութենէ յառաջ կու-
գայ :

ԱՍՏ: Գաղտնապահ կըլլամ :

ՍԱՆ: Բայց ամենեւին վերաբերութիւն չունի
ձեզի :

ԱՍՏ: (Մէկուսի) Տէր տղորմեա՛ս , չէ կըսէ չա-

մինչ չըսեր , Աղջիկ , գիտցած եղիր որ պիտի
զղջանս :

ՍԱՆ: Գործած մեղքիս վրայ միայն կը զղջամ
եւ այն ալ առ Աստուած :

ԱՍՏ: Պիտի հարկադրուիս կարդալ , կամաւ
ակամայ :

ՍԱՆ: Այո՛ , հարկադրել քեզ , որ ճամբարդ
շտկես :

ԱՍՏ: Երթալու վրայ եմ :

ՍԱՆ: Երանի՛ թէ ստոյգ ըլլար :

ԱՍՏ: Նայէ քեզի ըսեմ , քանի որ քաղցրու-
թեամբ կը խօսիմ , տա թուղթը հանել կար-
դալու ես , եթէ ո՛չ

ՍԱՆ: Ատոր տեսակ մը բռնութիւն կըսուի .
պարապ տեղը մի յոգնիք . իս գործէս պիտի
թողուք , բայց հոգ չէ :

ԱՍՏ: (Մեկուսի) ինչ կամակոր ըլլալը հաս-
կըցանք , սակայն անոր ալ ճարը կայ : Ո՛ւր
պիտի երթաք գիրք առնելու :

ՍԱՆ: Այո՛ , այո՛ , (Մեկուսի) սի Աստուած
իմ , ի՛նչ ընենք այն ըսելու է :

ԱՍՏ: Բայց գիտէ՞ք որ այս օրերս գրաւիւմա-
ւոր խանութը փոխեր է . ան ալ երէկ փեղրա-
վաճառին (շափագաճը) երթալուս գիտեմ , վասն
զի շարաթ մ'առաջ հոն անանկ խանութ չը
կար . ուր ըլլալը գիտէ՞ք :

ՍԱՆ: Ո՛չ :

ԱՍՏ: Աչքը նամակին գրպանն ուղղած , (Սան-

դուխտինս մօտենալով) Ասկէ շխտակ կերթաւ,
 վեր կելնես, հինգ վայրկենէն քառարած ճամ-
 բու մը կեդրոնը կը գտնես քեզ. աջ թեւիդ
 վրայ դառնալով կը տեսնես կարգաւ, ծխա-
 վաճառի, նպարավաճառի, հացագործի, մսա-
 ծախի, ջրավաճառի, սաիրիչի, սեղանաւորի,
 ժամագործի, դերձակի խանութները. ուրիշ համ-
 բելով, մէկ, երկու, երեք, եւ ահա չորրորդն
 է դրքին տեղը, հինգերորդը փեղրավաճառս:
 (Նամակը կը գողնաս) Գուրսի կողմէն ալ յայտնի
 է, կարծեմ կրցինք հասկցընել:

ՍԱՆ: Մեծ չնորհ. այդչափ խանութն ալ մըտ-
 քիդ մէջ աղմեցնելը, դարմանք կը պատճառէ
 ինձի:

ԱՍՏ: Տղէտ կարծածիդ պէս չեմ կարծեմ:

ՍԱՆ: Ի սէր եւ 'ի պատիւ այն փետրագարդ
 փեղոյրին, 40 խանութ 50 դուռն ալ ըլլայ
 միտքդ կը պահես:

ԱՍՏ: Պեռ ինչ նորելիք բաներու խանութներ
 դիտեմ:

ՍԱՆ: Ուրեմն ալ կարճ կապէ:

ԱՍՏ: Միտքդ պահեցիր:


ՍԱՆ: Այո, ծանօթութիւնդ շատ պարզ էր:
 Գոնէն դուրս, վեր, վար, օրօպէ, քառարած
 ճամբայ մը, աջ թեւ, Ծ հատ անունաւոր խա-
 նութ, Ծն ալ անանուն, չորրորդը դրավաճառ,
 հինգերորդը փեղոյր եւ դարձեալ փեղոյր:

ԱՍՏ: Մեծ յիշողութիւն, մէկ անպամով:

ՍԱՆ: Ըսածիդ ճիշդը • ապա ուրեմն . . . :

ԱՍՏ: Ապա ուրեմն մնացէք բարեաւ ձեր մաքրին վրայ :

ՍԱՆ: Եւ դուք նոյնպէս , զգաստութիւն կը մտղթեմ ձեզի , բարի աղատում . (Աստղիկը դուրս կելնէ) :



ԵՐՐՈՐԴ ՏԵՍ

ՍԱՆԴՈՒԽՏ Արևմտ

Աստուած իմ , այս ինչ փողոցները էր ձեռք
 գլխիս , աղէտ չարեւան մ'ունենայէն շատ
 աղէկ է խելացի թշնամի մ'աչքերդ , զլուխս
 խելք չք մնաց , ապ ճէր էթէ կարենայի իր սեւ
 աղխտութենէն դարձի բերել : Ահ , հայրս ճամբ
 բորդութենէն վերադառնալու առաջին օրը
 պիտի աղաչեմ որ աս փողոցէն կելնենք , ամէն
 օր . - վկայ սիրտս որ անտանելի է : Արթու
 թենէ , բողորով ին զուրկ • պատկառանք , հա
 մեստութիւն , - երբէք • վայելուչ խօսակցու
 թիւն , - ամենուին ոչ • թէ որ երեսը թքնե
 լու ըլլաս , անձրեւ կուգայ կըսէ . հաղիւ իր
 խօսքովը համողեցինք , թէ գրաւաճառին պի
 տի երթամ : Վայ անանկ ծնողաց , որ զաւակ
 նին աղխտութեան մէջ թողնելէն 'ի դատ , բը
 նաւ կրթութիւն ալ չը տան : Արտնք էթէ կամք
 ընեն , մէկ մէկ փիլիսոփաներ , երեւելի գիտ
 նականներ կրնան ընել իրենց որդիքը յօգուտ

ընտանեացն ու աղգին . բայց ընդ հակառակ , բո-
լոր ջանքերնին զուարճասիրութեան , ունայնա-
սիրութեան , եւ նորասիրութեան վրայ կը թա-
փեն . այս ընթացքին մէջ են նաեւ հասարակ
ժողովուրդէն շատերը . եւ ժամանակն անցնե-
լէն ետքը խելքերնին տուն կը կանչեն , բայց
ինչ օգուտ որ անժամանակ զղջումն արժէք
չունի :

Տէր Աստուած , դեռ սիրտս կը բարախէ ,
վասն զի քիչ չը յողնեցուց լեզուս , փարայ եւ
փեղոյրէն ուրիշ բանի անուն տալ երբէք չէ
վարժուած . ասանկներն ինչի կը նմանին . — ոս-
կեբարձ ուղտին , որ տեղը հասածին պէս , մետա-
ղին պարկերը վար առնելով , բայց կը մնայ կը-
նական խեղճ չորքոտանին ու չոր հեծանոցը :
Ա՛րդ , ասոր փառքն ինչ կարժէ . — ափ մը հող ,
Աւանդ որ պարապ տեղը ժամակորոյս եղայ : Նը-
թամ , երթամ , ժամ մ'առաջ սիրելի ընկերու-
հիւ Սաթինի : կը տեսնել , բարի լուրս հաղոր-
դել : Նրանելի կըլլայի , եթէ ասանկ արգելք
մ'ալ դէմս չեղնէր :



ԶՈՐՐՈՐԴ ՏԵՍ

ԱՍՏՂԻԿ Միճակ

Մանդուխտին նամակը ձեռքը


Հիմայ գիտցիր անխելք օրիորդ , որ Աստ-
վիկը գիտցածիդ չափ տգէտ չէ եզեր : տեսնեք

մի խեղացուցիւնը . — հիմայ բերնաչին իդ առ
ռիւր , անշուշտ կարեւոր թուղթ մ'ըլլալու է
աս , որ դնալուս պէս պահեց . արժանի չէ արդ
կտոր կտոր փշրելու : Բօսքս խօսք է , կեցիր
անդամ մը գրուածն ինչ ըլլալը հասկանամ , յե-
տոյ վրիժառու ըլլալը դիւրին է . անչ է եղեր
կարդալ դիտողներուն աչքաբացութիւնը , որ
գրականէն առնուլս անդամ չիմացաւ : Հարուս-
տի զաւկի մը դէմ խիստ բերան , յանդգնու-
թիւն , ազատ ազատ խօսիլ , կը մարտնի . հասա-
կըդ անկողնիդ չափ երկնցուր , չիք :

Իմ հայրս աս հարատութեամբը թէ որ հա-
րաւային Ամերիգայի մէջ ըլլար¹ , հիմայ հարիւ-
րաւոր դերիներու կիշխէր . մէկ հրամանաւ մեծ
խումբ մը ոտքի վրայ հանելով , լեռը դաշտ ու
դաշտը լեռ կը դարձընէր . այսն՝ այս . ո՛չը՝ ո՛չ
կըլլար , ինչպէս եւ հիմայ իր մեծապանծու-
թեանն առաջ ներկայացողը քղանձները իրարու
վրայ բերած , գլուխն ուսին վրայ ծռած , ձեռ-
քերն իրար անցուցած , խոնարհութեամբ , հեղ ,
պարկեշտ , ողորմելի աղքատի մը պէս անշարժ
կը կանգնի , ուր մնաց որ Անդուխտի պէս դըր-
սեցիլի մը աղջիկը . հոս կուգան մարդ կըլլան ,
մարդու ալ չեն հաւնիր . ճը՛ գնաւորները , (ձեռ-
քը ճակղին դնելով) Ա՛հ , որչափ գլուխս տաղ-
ցաւ ըսած խօսքերէն . բայց վերջապէս առան ,
գտան ըրածին փոխարէնը : Անձրեւէն փախչողն
անշուշտ կարկուտէն կը բռնուի : Թող երթայ

ուղածին չափ գրպանը դրած թուղթը վնասէ
եւ ինծմէ գաղտնիք պահէ :

Բայց սակայն կիրքս շարժելու տեղը սա է
որ կարդալ չը դիտեմ . ահա հոս ամեն բան
կանկ կառնէ . ինչպէս արդեօք հասկնալու է
թէ ինչ է դրուածը . հետաքրքրութիւնս վեր-
ջին աստիճան կը ներդէ դիս : Ասանկ գաղտնի
ու դուարձայի բաներ կարդալու համար միայն ,
պիտի աշխատիմ ինծի պէտք եղածին չափ կար-
դալ սովորելու , թէ որ անդամ մը սաղմոցն ել-
նեմ , անկէց անդին բան չը մնարի պէս է .
բայց հիմայ սա որո՞ւ կարդալ տալու է : (կերթե-
ւեկէ) Չը կրցի դեռ կիրքս մարել , անդգամ աղ-
ջիկ . անճարակ դրսեցի . հիւանդութեանս պատ-
ճառ պիտի ըլլայ , (նամակը գրպանը կը դնէ) :



ՀԻՆԳԵՐՈՐԻ ՏԵՍ

ԱՍՏՂԻԿ ՈՒ ՋԱՐՈՒՀԻ

ՋԱՐ: Ատ ինչ իրար անցումէ աղնիւ Աստղիկ :

ԱՍՏ: Լռէ Աստուածդ սիրես :

ՋԱՐ: Բարեւելու ալ մոռցանք , պօ՛նժուռ :

ԱՍՏ: Հող չէ խորութիւն չը կայ մէջներնիս :

ՋԱՐ: Գեթի դեղին , մոխիր կտրեր է երեսդ ,
ինչո՞ւ համար :

ԱՍՏ: Ես մոխիր կտրեցայ , թէ որ դուն ըլ-
լայիր , մարացորեն կը դառնայիր անանկ լեզ-
ուի մը դէմ :

ՁԱՐ: Ատ ի՞նչ տեսակ բան , Նզորոսի եփած
լեզուն է արդեօք :

ԱՍՏ: Ի՞նչպէս եփած , հուժ ու չորնալու լե-
զու մը :

ՁԱՐ: Որինն է , կրնամք ծանօթանալ :

ԱՍՏ: Ի՞նչ ըսել է , սա դրսեցի Քարեգինս ա-
նունով մէկը կայ մեր դիմացի տունը , կը ճան-
չէք :

ՁԱՐ: Ո՛չ , քոյր իմ :

ԱՍՏ: Ատի , Սանդուխտ անունով աղջիկ մ'ու-
նի , բայց ի՞նչ անկիրթ ու լկտի մէկը , տեսնե-
լու էք :

ՁԱՐ: Ձեր սիրելութիւնն անի բարկացուց :

ԱՍՏ: Անտարակոյս եղիք :

ՁԱՐ: Ի՞նչ պատճառաւ :

ԱՍՏ: Աս աղջկան տասնուհինգ օրն անդամ
մը տպուած լրագիր մը կուգայ , բայց ի՞նչ խեղ-
կատակ ու խնդարու բաներ կը գրէ , լսելու էք
քոյր իմ Չարուհի , երբեմն կերթայի կարդացած
ատենը մտիկ ընելու , այսօր ալ տեսայ որ խըն-
դարով անանկ թուղթ մը կը կարդայ , սիրտս
նեղանալուն դնացի որ մտիկ ընեմ , վասն զի
անանկ դուարձալիքներու շատ հետաքրքիր եմ :

ՁԱՐ: Հետաքրքրութիւնը անվայել սովորու-
թիւն մը չէ :

ԱՍՏ: Եւ մեղքս ի՞նչ պահեմ . անանկ բնու-
թիւն մ'ունիմ , որ բանն օր չորս օր լուրեր
առնել կուզեմ . առ որ համար ալ յատկապէս

կին մ'ունինք , երկու օրն անգամ մը մեզի կու-
 գայ եւ չը լսուած բաներ կը պատմէ , ամեն ի-
 ջիկուն ալ հայրս ու եղբայրներս, ասով միշտ
 կը զուարճանանք . չերկնցնենք խօսքերնիս ,
 աս աղջկան գնացի չը գնացի , ձեռքն եղած
 թուղթը գրպանը խօթեց , խոժոռ ու սեւ կեր-
 պարանք մը ցըցուց ամպամած երկնից պէս ,
 գոռոզաբար բարեւս ալ քթին տակէն առաւ ,
 անհաճոյ ընդունելութիւն մ'ըրաւ , լեզուին որ
 ըսես , ամենեւին խօսք չօղտէր . ես ալ շատոնց
 է միտքս դրէր էի վրան գլուխը լուսլ ծանր
 խօսքերով . որպէս զի սիրտը ծակի եւ բերնին
 չափ դնէ :

ՁՍԲ : Զարմանք . ձեզի պէս ազնիւ անձի մը
 դէմ անանկ խոժոռագէմ երեւալ , կարդացած
 թուղթը պահել , անվայել շարժմունք ընել ,
 բարեւ չառնուլ , մեծ բան . դուք կը պատմէք
 իմ կիրքս կը շարժի . սրչափ ալ անկիրթ կըլլան
 ատ աստիճանի մարդերը :

ՍՍՏ : Մինչ աղուոր ալ կը խօսիք , ամենեւին
 ստութիւն ալ չը կայ ըսածնուդ մէջ :

ՁՍԲ : Բայց ինչ խօսք անցաւ մէջերնիդ
 քոյր իմ :

ՍՍՏ : Ո՞ր մէկն ըսեմ , շատ : Սա ըսի իրեն ,
 թէ հարուստի դաւակ ըլլալովս , պարտիս ին-
 ծի պատիւ տալ , յարգանք ցուցընել , պատ-
 կառիլ , խոնարհ ըլլալ , հանիս հա . չէիս չէ
 ըսել , կամքս չը կոտրել , քու չափդ ճանչել

այսինքն գիտնալ որ աղքատի մը զաւակ ես .
անանկ չէ , սխմել ըսեր եմ :

ՁԱՐ : Այո , ատոր չէ ըսողին լեզուն Ձա-
քարիայի պէս կը պապանծի :

ԱՍՅ : Ա՞ն ինչ պատասխան տայ կը հաւնիս :

ՁԱՐ : Ի՞նչ :

ԱՍՅ : Ինչ որ ես , նոյնն եւ դու , ո՛չ վեր
եւ ո՛չ վար , այլ — հաւասար . սա խօսքին
բարկութեան կայծը գլուխս ցատկեց , եւ եթէ
մեր տունն ըլլար , անշուշտ կը տփէի զանի :

ՁԱՐ : Տէ՛ր ողորմեա :

ԱՍՅ : Աս խօսքերն ալ ի՞նչ համարձակու-
թեամբ կը զրուցէ գիտէ՞ք , տեղեակ էք :

ՁԱՐ : Ո՛չ քոյր իմ , ձեր ազնուութենէն պի-
տի իմանամ :

ԱՍՅ : Քիչ մը կարդալ գիտնալուն եւ ուսում
հաւան անունը կրելուն համար է , որ անանկ
աղատ աղատ կը խօսի :

ՁԱՐ : Անոր գիտցած կարդալն ինչ պիտի ըլ-
լայ քոյր իմ :

ԱՍՅ : Ես ի՞նչ գիտեմ , Քերականութենէն
քանի մը բառ գոց գիտնալուն , հետն անգամ
չը խօսուիր :

ՁԱՐ : Ծռանսերէն գիտէ՞ արդեօք :

ԱՍՅ : Ամենեւին ո՛չ :

ՁԱՐ : Ուրեմն ոչինչ . աղջիկ զաւակ մը Հա-
յերէն կարդալն ի՞նչ պիտի ընէ , հիմակուան ժա-
մանակիս պէտք եղածը Ծռանսերէն լեզուն է ,

Յուանսերէն խօսիլը չը դիտոյողը ստակ մը չան-
ժեր ասկէց ետև : Ես կարդայ գիտեմ ըսելով
պարծանք մը չըլլայ խօսածս , ինծի պէս յատեան
չկրնար ելնել . եւ չըթր չըթր խօսք խօսիլ :

ԱՍՏ : Ապա ուրեմն ինչ ըսեմ ան չորնալու
լեղութիւն , անիծեալ բերնին :

ՁՍԲ : Ոչինչ բանի մը համար կիրքով մ'ը
խօսիր քոյր Աստղիկ :

ԱՍՏ : Որ ինծի տղէտ , բան չդիտոյող , ան-
կիրթ . . . մականունները կուտայ , իբր թէ
դպրատուն չը գնացողը տղէտ կըլլայ եղեր :

ՁՍԲ : Դպրատուն ինչու պիտի երթաք , սանկ
մարդու մը զաւակ էք , եւ ինչ պէտք կայ եր-
թալու հիմակուան խել մը աղջկանց համար
բացուած դպրոցները , որոնց մէջ իմ ուզածներէս
մէկն ալ չկայ , ալ միայն , կարդալ , կարդալ :

ԱՍՏ : Աղէկ չեմ ըսեր , թէ աղջկանց համար
կարդալ գիտնալն երբէք վայելչութիւն չունի .
վասն զի տէր պապա չեն ըլլար , ոչ ալ Աար-
դապետ , եւ ոչ Ամնամար . աղէկ չեմ գրուցեր :

ՁՍԲ , Եստ աղէկ , ամեն մէկ խօսքդ մէկ
մէկ ոսկի կարծեն : Ներկայ ժամանակիս ատանկ
անմիտ մարդիկ , չը գիտեմ ինչ մտքով սկսած
են աղջիկ աղաքնին մեծ ու պզտիկ դպրատուն
դրկել , ամեն առտու ալ մեր տանն առաջին
կ'անցնին խումբ , խումբ . այնչափ ալ կանուխ
որ կարծես թէ քուներնին չէ տարեր . վար-
ժապեաններուն ալ սովբեցուցածն ինչ է , գիտէք .

միտքս պահածներս քեզի ըսեմ, քերականէն
սկսելով մինչեւ Քերականութիւն, Քրիստոնէա-
կանութիւն, Վարդապետութիւն, Հայոց պատ-
մութիւն, Հին պատմութիւն, Նոր պատմութիւն,
Թուարանութիւն, Աշխարհագրութիւն, Գրու-
թիւն, եւ այլն եւ այլն. դեռ շատ մը ութիւններ:

ԱՍՏ: Խեղքս կը թոցնեմ հիմայ, այդչափ
թութերն ինչպէս դլուխնին կը լեցնեն, Հրէի
խանութ է. ես ստ ութիւններուն անունն ան-
գամ չեմ կարող միտքս պահել:

ՁՍԲ: Կարծես որը գիրք շինող պիտի ըլ-
լայ, որը վարժապետ, որը վաճառական, որը
գրողիր, որը պատմագիր, որն ալ Նրկրաչափ,
խելք հասնելու բան չէ ատոնց բռնած ընթաց-
քը:

ԱՍՏ: Սիրելի լեզու, կարծես բերնէն մար-
գրիտ կը թափի: (մեկուսի)

ՁՍԲ: Քոյր խմ Աստղիկ:

ԱՍՏ: Ականջս քեզի է աղնիւ Չարուհի:

ՁՍԲ: Աղէկ համողուեցէք, որ աղջիկ տղա-
յոց համար Հայերէն կարգալ գրել սով ըլլն ա-
մենատչինչ, ամենաանպիտան, ամենամեծարտար
բան մ'է, յիշելն անգամ անքաղաքաւարու-
թիւն. մեզի պէս աղնուականներուն միայն
պէտք է Ծռանսերէն խօսելու բրաթիք ընել,
խաղաղ սովորիլ եւ Ֆիլանո զարնել, բայց Հա-
յեւա կարգալ, — անմենեւին ոչ:

ԱՍՏ: Ես ստ ըսածներուդ մէկն ալ չեմ

գիտեր :

ՁԱՐ : Պէտք է ջանաք աշխրհի , որ ժամա-
նակիս մարդն ըլլաք . վասն զի հիմակու ատե-
նքս աս ըսածներս չը գիտցողը քիչ է , եւ ե-
թէ ձեր տունը շրջազգեստ ձեւելու համար
Մատմագէլ մը դայ եւ անոր հետ Գռանաերէն
խօսելու անկարող ըլլաք , սրչափ պղտիկու-
թիւն է , կրնաք երեւակայել :

ԱՍՏ : Հրաման քնիդ դրպատուն կերթաք :

ՁԱՐ : Աստուած չընէ , ինծի պէսին կը վայելէ
դպրատուն երթալ . եւ չըսինք որ իմ ուղած-
ներուս մէկն ալ հոն չը կայ :

ԱՍՏ : Ապա ուրեմն ո՛ւր կը սովորիք :

ՁԱՐ : Միթէ հայրս կարողութիւն չունի
քանի մը դասատուներու ամսական տալ . կը
հայիմ որ ասանկ բաներու բոլորովին անտեղ-
եակ էք :

ԱՍՏ : Ո՞վ է վարժապետդ :

ՁԱՐ : Միւսիւ էթիէն կըսեն :

ԱՍՏ : Էթ եէյէն ինչ ըսել է . միս ուտող :

ՁԱՐ : Մարդուն անունն է ինչ գիտեմ ինչ

ըսել ըլլալը :

ԱՍՏ : (Մեկուսի) Հիմայ եկուր հոս մի՛ խնդար ,
հայինք կրնան ինքզինքդ զսպել . մարդուս ա-
կանջին ան խօսքն որ օտար կերպով ունոր հնչու-
մով մը կը դարնէ , անյասպաղ կսկըսի խնդալ , մանա-
ւանդ ասանկ զուարճալի խօսքին , որուն վրայ
խնդալով խնդալով երեսի սակորները կսկըսին

ցաւիղ . Միւսիւ Էթիէն անունն ալ լաած բանտ
չէր . լեզուն ոսկոր չունի, պճռթկէ, առւր իրեն,
անիկայ ուղած կողմը կը դարձնէ . ինչ եւ ի-
ցէ մեր խօսքը շարունակենք . խանդն ուրկէ կը
սովրիք :

ՁԱՐ : Խաղն ու Փիանօն ալ Միւսիւ Բիէրէն :

ԱՍՏ : (Մեկուսի) Առ քեզի միսօի բիրէ մ'ալ
աւելի : Քոյր իմ Չարուհի :

ՁԱՐ : Խօսէցէք :

ԱՍՏ : Ատոնք ամենն ալ Ֆիրէնկ են :

ՁԱՐ : Անշուշտ այն . անոնց ըրածը հայուն
բերնին ինկեր է որ ընէ :

ԱՍՏ : Իմ հարցնելու պատճառն ալ ատ էր,
եւ կասկածս փարատելու համար մանրամաս-
նաբար հարցում ըրի ձեր հրամանքին . Բայց
ինչպէս, դիւրին կը սովրիք :

ՁԱՐ : Ատիկայ իմ կամքէս կախում ունի . ու-
ղած ժամանակս կը սովրիմ, չուղած ժամանակս
չէ, ինծի ո՛վ կրնայ դէմ դնել . բայց վարժա-
պետին ամսականը շարունակ կուտանք, եւ
ուրիշներուն պէս ոչ թէ ամիս մը ետքը . մերը
կանխիկ է, վարժապետը դասը կուտայ, 2880
ժամէն ետքը կակուղիկ թուղթերը կընդունի .
ու այնչափ շնորհակալ կըլլայ, որ պագնելով
ճակատին կը դնէ, եւ մէրսի, կրան մէրսի ըսե-
լով ճիճողը կը դնէ, ետին անգամ չընայիր .
իմին ալ ջանքս, փափաքս, սա անգամ մը Ֆը-
ռանսերէն խօսելու քաջավարժութիւնն է . ան-

դամ մ'որ առուզածս ալ լիննամ , աշխարհ հոգս
չէ , եւ աղէկ գիտես որ , դեռ ամիս մը չեղաւ
եղբայրներու Փարիզէն դալերնին . ամեն օր
իրարու հետ ճանասերէն կը խօսինք , Հայերէ-
նը միայն հօրս , մօրս եւ սպասաւորներուն հետ .
տեսնիր հիմայ , առ ժամանակին պէտք եղածն
ալ ասոնք են :

ԱՍՏ : Ո՛հ . . . :

ԶԱՐ : Քոյր Աստղիկ :

ԱՍՏ : Հրամայէք :

ԶԱՐ : Ասոնք քեզի համար շատ աղէկ են ,
վասն զի ուզածիդ պէս կը դուարձանաս , վասն
զի կարդալ գրել չեն սեպուիր , վասն զի նոր
բաներ են . վասն զի պէտք են , վասն զի քե-
զի պէս հարուստի դաւկի մ'ալ վայելուչ է ,
վասն զի ազնուական էք , եւ վասն զի այս
օրուան Փօլիթիքան ասանկ կը վերցնէ , վասն
զի մենք ալ առ օրին մէջ կապրինք եւ վասն
զի . . . :

ԱՍՏ : Սրտիս իւղերը կը հալեցնես կոր աղ-
ջիկ . տեսնենք նախ եւ առաջ մարս համուկե-
լու է , վասն զի տանը մէջ անոր հան , հան ,
չէն , չէ է , եւ թէ որ կամքս չը կատարէ , ա-
նոր ճարն ալ գիտեմ . հեռերնին չեմ խօսիր ,
քէն կընեմ , սեղանի չեմ նստիր , ժանիքներս
կը կախեմ . ինչ որ ըսեն , չեմ պատասխաներ .
մէյմ'ալ նայիս , սիրտս չը կտորելու համար
ժամ մ'առաջ բոլոր ուզածներս կը կատարեն .

ես ալ այն ժամանակը առ բաներուն մէջ թէ որ քանի մը օրէն յառաջանալու ըլլամ, գոնէ քիչ մը պարծենալու տեղի կրնամ ունենալ, ան առեն թող դիմացս գայ բան դիտեմ, հաշիւար դիտեմ ըսելով, բան մ'ալ չը դիտցող Սանդուխտ է ինչ է. այն շատախօս աղջիկը, մըրսի վրան, Յայց ինչ կըսես քոյր իմ Չարուհի, որչափ բարկութեան արժանի:

ՁՍ.Ր : Ինչ կայ ազնիւ օրիորդ:

ԱՍՏ : Մինչեւ այս ժամիս սիրտս կը նետէ. նա չար օրիորդին ըրածները դեռ մտքէս չեն ելնէր. թէ որ ձեռքս անցնի վայն ու եղուկը պիտի բերեմ դիտուն վրայ. որ անանկ ծանր խօսքերով սիրտս ծակեց:

ՁՍ.Ր : Աս համարձակութիւնը եւ ձեզի պէս փափկամտնող Օրիորդի մը պատիւը չը պահելու անհողութիւնը կարդալէն կուգայ վրանին:

ԱՍՏ : Տեսնելու էիր ինչ լրբարար եւ իմ աստիճանիս անվայել խօսքեր բերնէն դուրս տուաւ, կը վայելէր, դուք դատեցէք:

ՁՍ.Ր : Մեծ անքաղաքավարութիւն:

ԱՍՏ : Գիտելու տեսարան մ'էր սիրելի քոյր. անանկ ժանիք, անանկ սեւերես կերպարանք, անանկ խիտ յանդգնութիւն չէ տեսնուած. մէկ մ'ալ կանգներ, ինծի Աարդապետ կը ձեւանայ, բերանը քարոզի կը դարձնէ, խոստովանահայր Տէրաէրի պէս խրատել կուզէ, Իշխանի պէս հրամայել կը յանդգնի, վարժապետ

տի պէս դաս տալու կելլէ, եւ անանկ լեզու-
ները կը կլլեմ, կուտեմ, կը լռեմ :

ՁԱՐ : Ասոնց սովրածն ալ սովրելիքն ալ աս-
է . անգամ մ'որ սկըսին մարդու կարգ անց-
նիլ, մեծ ու պղտիկ չեն նայիր . քիչ մ'ալ ան
կարգայր սովրածնուն պէս կսկըսին ուռնալ,
որպէս թէ ամեն բանի մէջ ծայրացեր, հա-
թիւմ պիտիւմ ըրեր են :

ԱՍՏ : Գէմս կանգներ, կարգալ, գրել գիտ-
նալու է, Գպրատուն երթալու է, եւ սա գի-
տեմ, նա գիտեմ . ոչինչ բաներ :

ՁԱՐ : Բայց չեն գիտեր որ բան մ'ալ սով-
րելիք չունին . եթէ բան գործ չունին, թող
գիշեր ցորեկ ետեւէն իյնան :

ԱՍՏ : Ատոր չէ ըսողին լեզուն Չաքարիայի
պէս կը պապանծի :

ՁԱՐ : Ասոնց մեծ գործն ինչ է գիտէք,
մանաւանդ աս օրերս :

ԱՍՏ : Ի՛նչ :

ՁԱՐ : Իրիկուան կերակուրէն ետքը, կլորիկ
սեղանի մը բոլորտիքը շարուելով, թէ որ եղ-
բայրնիր ունին, չիլէն մտած կրօնաւորի պէս
կսկսին երկայն բարակ ձեռքերնին մէկ մէկ
թուղթ առնուլ կարգալ . մանաւանդ երբոր լը-
բագիր ըլլայ կարգացածնին, մէյմ'ալ նայիս,
թագաւորութիւններն ու աղգերը իրարու դէմ
պատերազմի կը հանեն, Տէրութեանց պաշտօնա-
տարները կը փոխեն, հասարակապետութիւն

(Ռէվօլյուսիօն) կազմելու կը պատրաստուին , նոր
օրէնքներ կը հաստատեն , մէկը իշխանութեան
գահը կը բաղձեցընեն , միւսը աքսոր ընելու ու
բողոք կուտան . աս է ան չէ երբօր կարող չե-
ղան անոնցմէ մէկին կայանք տալ , կը դառնան
ազգային խնդիրներու վիճաբանութեան , ըմ-
բըշամարտից պէս , հակառակ կարծեօք դէմ առ
դէմ գալով , ազգը յերկրէ յերկին կը բարձրա-
ցընեն վար կիջեցընեն , նոր ժողովքներ կը հաս-
տատեն , ժողովապետ , ժողովական , ժողովուրդ
կըլլան , ազգին նոր ընթացքներու հրահանգներ
կը պատրաստէ մէկը , միւսը կը մերժէ , մէ-
կը կը շինէ միւսը կը քակէ . մէկը գիտնական-
ները կը պարսաւէ , միւսը հարուստները , տգէտ-
ները . մէկը իշխանութիւն խոստանայ , միւսը
պաշտօնէն կը հրաժարի . կողմնակցութիւններու
կը բաժնուին , իրարի պէս պէս ածականներ կը
դնեն , դուք տանկ էք մե՛ք նանկ ենք , այո՛ ,
ո՛չ , իմ ըսածս անանկ չէ , իրաւ է , սուտ է ,
չենք ընդունիր , կընդունիրք , եւայլն , ըսելով ,
վէճը կը տաքնայ , ազմուկ մը , իրարանցում մը
կռիւ մ'է կը ծագի մէջերնին , կարծես թէ Սէ-
վասթօբոլի ամբոյցներուն դէմ կը պատերազմին ,
միայն վառօղն ու հրացանը պակսելով . վեր-
ջապէս որը Չաքարիոսեան որն ալ Մարկարի-
ոսեան ըլլալով , ամենը մէկ մէկ կողմ կը քաշ-
ուին . հանդիպմծ էք ասանկ եղելութեան .

ԱՍՏ: Այո՛ , այո՛ :

ՁԱՐ: Անցեալ իրիկուն ընտանեօք տան մ' այցելութեան գնացինք, հոն առ բաները աչքով տեսայ ու խոսակցայ ալ մանաւանդ որ չբազիրը կարգացողը քոյրերնին էր եւ ինքն աղջիկ գաւառի խօսքի վճիռ կուտար. խնդալու բանը ան տունն սա եղաւ որ, ուրիշ հիւր մը հետերնին առաւ տուաւ եւ վերջապէս երգումով ըսաւ, թէ տղաս թէ որ մեծնայ. քերականէն, սաղմոցէն եւ նարեկէն ուրիշ բան մը չը պիտի սովորեցնեմ, քերականութիւն ըսած գիրքին երևան անգամ չը պիտի ցցնեմ նմանապէս ուրիշներուն, վասն զի շատ կարգալով ճշմարիտն ու առան իրարմէ կորոչեն, ու իրենցմէ մեծը պըղտիկ ձգել կուզեն, առ քաշելու բան չէ. ես ալ առ խօսքին մտքէս բրնձօ ըսի:

ԱՍՏ: Տես քոյր իմ, ըսած խօսքերս ինչպէս մարդարեից պէս տեղնի տեղովը կը կատարուին. իրաւունք չունիմ եղեր ըսել թէ աշխարհք կարդալ գիտցողներէն պիտի կործանի:

ՁԱՐ: Բայց խօսքը մէջերնիս մնայ. ըսածնուն շատը ճշմարիտ էր, միայն կարգաւ եւ համեատութեամբ չէին խօսելը, այլ, կիրքով, վառուելով:

ԱՍՏ: Համեատութիւն, խոհեմութիւն մի վերնտրուեր անոնց քով, կարծեմ այն չար Սանդուխտին վրայօք ըրած պատմութենէս ինչ տեսակ մարդ ըլլալնին գիտցա՞ք, որուն, այն չիքին, անունն անգամ չուզեմ յիշել, բայց ա-

դէկ յաղթեցի :

ՁԱՐ: Ի՞նչպէս :

ԱՍՏ: Ուղած թուղթս չը կարդաց . լեղի ըսի , անուշ ըսի , սանկ նանկ , ամենեւին անկաճ չը դրաւ . ես ալ ի՞նչ ընեմ , — խօսքի բըռնելով կամացուկ մը գրականէն առի , որ ուրիշ գալը գիտնայ :

ՁԱՐ: Ո՞ւր է , կրնանք տեսնել այդ թուղթը :

ԱՍՏ: Սհան , (նամակը Ձարուհիին կուտայ) կրնանք կարդալ :

ՁԱՐ: Ս,ս թուղթը նամակ կը նմանի :

ԱՍՏ: Ի՞նչ կըսես , նամակ է :

ՁԱՐ: Ա,յո՛ , ձեւը եւ վրայի գրուած գիրը նամակ եմ կըսէ :

ԱՍՏ: Աւելի ազէկ , ապա ուրեմն միջոց ժամանակի չանցուցած կարդան : Տես անգամ մը , ընտղն ի՞նչպէս կը գտնէ եղեր : Աարդան կարդան :

ՁԱՐ: Թէ որ գիրքի գիր ըլլար , կարելի է քակելով կարդայի :

ԱՍՏ: Տունի պատ է որ քակես :

ՁԱՐ: Ըսել կուզեմ թէ չգիտցած բառերու գիրերն իրարու քով բերելով , կապելով , հեղելով , շարելով , քակած կըլլայի , կարծեմ քիչ մը հասկցնելու չափ կրցինք բացատրել :

ԱՍՏ: Թէ որ հասկցայ սատանան ուրացած ըլլամ . ի՞նչ եւ իցէ հիմա ինձի ատ քակելը չի ները հարկ չէ , շուտով կարդացէք :

ՁԱՐ: Քոյր իմ, Հայերէն մինչեւ Սաղմոցը կարդացած եմ, ան ալ երկու տարի կ'ըլլայ ձեռքս չեմ առած:

ԱՍՏ: Ես ալ ասանկ դադանի բաներու եւ գուարճալեաց համար կամաւ ակամայ պիտի ջանամ գոնէ մինչեւ Սաղմոցը կարդալ սովորիլ:

ՁԱՐ: Մինչեւ Սաղմոցը կարդալով չըլլար, թո՛ղ տուր Աստուածդ սիրես, ատ Հայեվար կարդալուն ծարը չը գտնուիր:

ԱՍՏ: Ա՛յերջապէս ըսած խօսքերէդ սա կիմացուի, որ աս թուղթը կարդալու կարողութիւնս չունիք. թէ որ կարճատես էք, ձեզ ի սպուռ որ ակնոց մը բերեմ:

ՁԱՐ: Ո՛չ, ո՛չ, դեռ ասանկ բաներու սովորութիւնս չունիմ:

ԱՍՏ: Բնականէն հաւկուր չըլլաք:

ՁԱՐ: Օ՛րիորդ, տես միտքդ ո՛ւր տեղերը կը տանիս. ատ ըսած պակասութիւններուդ եւ ո՛չ մէկն ալ ունիմ, բաց 'ի կարդալու անկարողութենէս:

ԱՍՏ: Չըսես, որ բոլոր յոյսս պարապ ելաւ. մէկ նամակը չը կրնանս կարդալ, շատ բան. թէ որ ասանկ բան մը պատահելու ըլլայ որո՞ւ կարդալ կուտաք:

ՁԱՐ: Միւսիւ թան կղբայրս պէտք եղածին չափ գիտէ, անոր կը կարդացնեմ:

ԱՍՏ: Սակայն հիմայ ինչպէս հասկնալու է,

Թէ թնչ է գրուածը . սրտի մեծ ներդուծիւնս
կղզամ ահա . հետաքրքրութիւնս լիովին իս
նեղել սկսեց , ասոր ճարը :

ՁԱՐ: Անի ձեր ազնուութեանը գիտնալու
բանն է . այն եթէ հասկցուէր գրուածը , դէշ
չէր ըլլար . բայց սով զիտէ թնչ պարապ բան է
քոյր իմ , որուն համար ձեր փափուկ սիրտը
կը նեղէք :

ԱՍՏ: Պարապ մարապ թնչ որ ալ ըլլայ , ինծ-
մէ պահելուն համար հասկնալու եմ , նա մա-
նաւանդ որ նամակ ալ է , երբէք չեմ կըր-
նար բարձի թողի ընել . կարելի է իմ վրայօք
մէկը խօսք ըրած է , կարելի է իս գոված ,
կարելի է իս բամբասած , կարելի է զրպար-
տած եւ կարելի է որ եւ իցէ անվայելչութիւն
մը խորհած ըլլայ , կարելի չէ :

ՁԱՐ: Բայց կարելի է , որ ատ ըսածներուդ
եւ ոչ մէկն ալ կարելի ըլլայ . անպատճառ
Թարգմանն բռնելու է :

ԱՍՏ: Քոյր իմ , կը նայիմ որ դուք ալ երբեմն
կամքիս հակառակ խօսքեր կը նետէք :

ՁԱՐ: Ներող եղիք համարձակութեանս , ազ-
նիւ Աստղիկ , բարեկամական կատակ է ը-
րածս ,

ԱՍՏ: Ինչո՞ւ Թարգմանն բռնեմ , մինչեւ որ
յարմար մէկը գտնեմ կարողալ տալու , կը պա-
հեմ :

ՁԱՐ: Ա՛վ գիտէ հիմայ տէրը որ տեղերը կը

փնտռէ, եւ որչափ ցաւ կողմայ :

ԱՍՏ: Ուղածին չափ թող փնտռէ, իրար անց-
նի, շփոթի, ցաւի, լայ, ողբայ, օ՛Ք ընթի,
ան լանի հեծելով, վերջապէս ըսած անքա-
ղաքավարական խօսքերուն համար դայ մե-
ղայ ըսէ, ոտքս պլլուի, էհ, ան ատենն ալ
կարելի որ սիրտս բուխ ըլլայ, դու՛թս չարժի
վրան ու հանեմ նամակը տամ: Ա՛նդգամ:

ՁԱՐ: Նամակը հանել տալդ ալ մեծութեան
նշան մ'է, ազնուութիւն մ'է անոր ըրածին փո-
խարէն :

ԱՍՏ: Բայց ահա ահա, սա այն չար աղջկան
ընկերն է, (Սաթինիկը ցուցնելով որ դի-
մացի կողմէն կուգայ) . կանչենք անի կրնայ
կարդալ, հիմայ հասայ փափաքիս, փառք քեզ
Աստուած . սա բաղդիս նայէ անդամ մը :

ՁԱՐ: Չեմ յուսար որ կարենայ կարդալ :

ԱՍՏ: Գիտցածդ չէ, կը ճանչնաս :

ՁԱՐ: Ա՛չ :

ԱՍՏ: Դուք ամենեւին ձայն մի հանէք, ես
ինչ կընեմ չեմ ըներ կը կարդացնեմ, առ կող-
մէն անհոգ եղիք, ատանկ բաներու վարպետն
եմ :

ՁԱՐ: Շատ բարի :

ԱՍՏ: Գուք միայն թափի ըրէք :

ՁԱՐ: Ինչպէս որ կուզէք :

ԱՍՏ: Լռէ ահա կանցնի, հոս կանչեմ :



ՎԵՅԵՐՈՐԴ ՏԵՍ

ԱՍՏՂԻԿ, ԶԱՐՈՒՋԻ, ՍԱԹԻՆԻԿ

ԱՍՏ: Ազնիւ Սաթինիկ , պատիւ կը համարիմ քառորդի մը չափ ձեր քաղցր տեսութիւնը վայելել , հոս հրամեցէք , բարի եկաք , բարի ըլլայ դալուստնիդ :

ՍԱԹ: Բարի տեսութիւն ,

ԱՍՏ: Ո՞ր հովը փչեց քեզ աս տեղերը . Աստուանձ խրկեց ինչ ըրաւ . սրտիս հետ կը խօսէիր :

ՍԱԹ: Ի՞նչ կայ , բարի է . . . :

ԱՍՏ: Ձեզ նման առաքինի օրիորդի մը գալուստէն միշտ բարութիւն կը ծագի . այն բարի է , մանաւանդ ինծի համար , երբոր սա թուղթին մէջ ինչ գրուած ըլլալը ձեր շնորհիւը հասկրնամ (Նամակը Սաթինիկին կուտայ) :

ՍԱԹ: Շնորհ ունիմ մեծապէս , որ անկեղծաբար ձեր գաղտնիքն ինծի կը վստահիք , կըրկին շնորհ ձեր հաւատարմութենէն :

ԱՍՏ: Հաւատարմութեան եւ գաղտնիքի բան չկայ , շուտով կարդայիք :

ՍԱԹ: Ատ ալ ձեր ազնուութիւնն է :

ԱՍՏ: (Մեկուսի) Տեսնո՞ւք հիմայ ինծի պէս հարուստի մ'առաջ գործածուելու լեզուն . շնորհակալ եմ , հաւատարիմ , ձեր ազնուութիւնը , թէ եւ աս գրքի լեզու է . բայց ծառայ եմ չըսաւ : — Ժամանակ մ'անցընէք :

ՍԱԹ: Ձեզի եկած չէ կարծեմ աս նամակը :

ԱՍՏ: Ինչ որ է : (Մէկ կողմ) Իրաւ նամակ է
եղեր :

ՍԱԹ: Մխարմունք մ'ըլլալու է ասոր երթեւե-
կին մէջ :

ԱՍՏ: Մխալ մխալ կարդալու ես :

ՍԱԹ: Ձեր անուանը չէ ուղղուած :

ԱՍԳ: Տէր իմ Աստուած , աս ամեն կարդալ
գիտցողներն փորձանք կըլլան :

ՍԱԹ: Քանիերորդն եմ :

ԱՍՏ: Օրիորդ դու . ես քեզի հոս կանչեցի
աս թուղթը կարդալ եւ ոչ թէ շաղակրատու-
թիւն ընել . ատանկ ոչինչ խօսքեր մտիկ ընե-
լու ժամանակ չունիմ , կամ կարդա , կամ տեւր :

ՍԱԹ: Բայց ուրկէ առիք :

ԱՍՏ: Համբէն անցած ժամանակս նայեցայ
գետինը թուղթ մը կայ , դրամաթուղթի պահա-
րան կարծելով , ինդումերես շունչս տունն առի ,
բացի նայեցայ յոյսս պարապ ելաւ , երկու ե-
րես թուղթի վրայ գիր . հետաքրքրութիւնս
իս նեղեց գոնէ գրուածին միտքը հասկընա-
լու , եւ ահա ձեզ կանչեցի որ աս ծառայու-
թիւնն ընէք :

ՍԱԹ: Գիտէք , որո՞ւ ուղղուած է այս նամա-
կը :

ԱՍՏ: Թէ որ կարդալ գիտնայի ինչ կարեւո-
րութիւն կար ձեզ կանչելու :

ՍԱԹ: Անշուշտ ցրուիչին ծրարէն ինկած ըլ-

լալու է որ մեծ պատասխանատուութեան տակ
կիցնայ :

ԱՍՏ: Փորձանք աղջիկ , ես քեզմէ ատ պա-
րապ խօսքերը չեմ սպասեր . հիմայ սա թուղ-
թը կարդալու ես , թէ որ առողջ տեղդ դառնա-
լու կը փափաքիս . . . :

ՍԱԹ: (Մեկուսի) խեղճ Սանդուխտիկս , Աստ-
ուած արտիդ արդարութեանն ողորմելով , քու
հաւատարիմ եւ սրտակից Սաթինկանդ ձեռքը
հասուց սիրելի հօրդ այս նամակը , որ անմխի-
թար չը մնաս . այս օրիորդը , նեղութիւն նե-
ղութեանց , եւ վասն այդ չափ նեղութեանը՝ քա-
նի մը վայրկենէն փառաւոր , փրփրադէզ եւ փո-
թորկայից նեղութիւն մ'ալ կառնու , հիմայ ,
հիմայ :

ԱՍՏ: (Մեկուսի) Վայ չար սատանայ վայ .
առողջ գլուխնիս տարինք Աւետարանին տակը
գրինք , աս ինչ ձուն էր եկաւ գլխուս . նամա-
կը կարդալ տանք ըսելով վրայ տուինք . թէ
որ ամեն կարդալ գիտցողներն ալ աս բնութեան
տէր են , վայ եկեր է աշխարհիս գլխուն : Սա-
թինիկ :

ՍԱԹ: Ունկնդիր եմ :

ԱՍՏ: Անացդ օրերը կանգ ըլլայ , սեւ ժամե-
րու համնիս , թէ որ սա թուղթը չը կարդաս :

ՍԱԹ: Աստուծոյ վճիռը մարդուն չընկնիր ,
մանաւանդ քեզի պէս չոր երկոտանիի մը :

ԱՍՏ: Արդարեւ ձեռքդ անգամ տալը գղջացի :

ՍԱԹ: Մի բարկանաք :

ԱՍՏ: Ըրածիդ դէմ. կարդա տեանեմ, որ
չը բարկանամ :

ՍԱԹ: Երեւան քաղաքէն Սանդուղտին հայրը
դրկած է :

ԱՍՏ: Ի՞նչ է գրածը :

ՍԱԹ: Ականջ դիր :

ԱՍՏ: Պատրանատ եմ :

ՍԱԹ: (Մեկուսի) Ի՞նչ բնենք հիմայ չը կար-
դալ չըլլար, բայց անոր ճարն ալ գտայ, այս
համակէն ինքը բան մը չը հասկընար, ուստի
դուրսէն սուտ խօսքեր կը շինեմ քովէս, եւ ա-
նով իր փափաքն առած կըլլայ :

ԱՍՏ: (Զարուհիին ցած ձայնով) Փնռք քեզ
Աստուած, ապառաժ քարէն շուր բղխեցուցինք .
մտիկ ըրէ քոյր իմ տեանենք ի՞նչ գրեր է :

ՍԱԹ: Ահա :

Միրելի դաւակա.

Ամսուս հին տեղս հասայ եւ հիմայ առ գի-
րը քեզի գրեցի . շատ բարեւ, ի՞նչպէս էք,
աղէկ էք, Աստուած ուզածին պէս ընէ . քեզ
տեանեմ, կարդայէտ ետ չը մնաս, ծուլութեան
անձնատուր չըլլաս : Հօր մը պարտականութիւնն
է որդին դաստիարակութեամբ կրթել՝ մինչեւ
որ մեծնայ եւ չըլլայ մեծ ցաւ ընտանեացն ու
ազգին . հոս յանցանքը որունն որ է, մեղքն
ալ անոր :

Որդեակ իմ տգէտ չը մնաս, տգէտ մարդոյ

կեանքը երկայն ճամբորդութեան կը նմանի ,
 առանց ուր երթալը գիտնալու . անոնք երկրի
 վրայ չոր բազմութիւն մ'են , գուրու գալապա-
 լըզ, մի միայն ուտելու , խմելու , հագուելու
 եւ դարդարուելու համար կապրին ու գրեթէ
 չորքոտանիներէն երկու ոտքով կը տարբերին ,
 ասոնք գիտցիր եւ ըստ այնմ գործածէ կենացդ
 ժամերը :

Մտղաց շատերը առ օրերուս մէջ անգամ
 երկնատուր պարտաւորութիւննին չեն ճանչցած .
 իրենք տգէտ մեծցած ըլլալով , դաւակնին ալ ա-
 մենատգէտ կը թողուն . սատանայէն այնչափ չեն
 խորշիր սրչափ որ ուսումնականութենէն , մանա-
 լանդ տեսակ մը հարուստները , աղջիկ դաւակ-
 նին թութակի պէս վանդակի մէջ դնելով միշտ
 կը դուրգուրան վրան . ամեն օր արեւուն կը
 մեռնին , եւ թէ որ մարդուս մեռնինն ասանկ
 ըլլար , աշխարհի մէջ մարդիկ չէին սղմուեր . կա-
 կուղ բաստեռանց (սէտիր) եւ փետուրէ աթոռ-
 ներու վրայէն վար չեն առնուր , ծաղիկ ընե-
 լով գլուխնին կանցունեն . եւ մերթ առ մերթ
 փեղրաւորելով , փետրաւորելով , գունաւորելով ,
 դգեստաւորելով , գոհարաւորելով , օղաւորելով ,
 ձեռնոցաւորելով , ամաղօնաւորելով , մօտայա-
 ւորելով , հովանաւորելով , փառաւորելով , թե-
 ւաւորելով , ոտնաւորելով , որորուելով , ծաե-
 լով , ծամռակելով , դրօսարաններու , զուարճա-
 հանդէսներու , խաղարաններու . . . այցելութեան

կելնեն . ասանկ բաներու համար հաղարաւոր
դահեկաններու քսակներ պարպել ոչինչ կը սե-
պեն , բայց կարդալու , գրքի , բարենպասակ
ընկերութեանց , դպրոցներու եւ ազգային յա-
ռաջագիտութեանց համար հարիւր փարայ տալը
կարծես իրենց անանկութեան դուռ կը բանայ .
ասանկներուն արքայութիւնը մինչեւ գերեզմա-
նին դուռն է :

Օրիորդ . գիտցած չը գիտցած բանիդ հե-
տաքրքիր մ'ըլլար . ինչպէս ընտանեկան սովո-
րութիւն եղած է մանչ՝ մանաւանդ աղջիկ տղա-
յոց . անկիրթներու հետ կենցաղավարելու դժ-
բաղդութիւն կը մաղթեմ քեզի , որոնք մահա-
ցու թոյն մ'են ինչպէս դիմացինդ . . . եւ երբէք
չը գիտեն որ ընողը կը գտնէ , դիմացինին փո-
սը փորողն ինք մէջը կընկնի . աչքը երկինք
տնկողը՝ ինքըդինքը հորը կը գտնէ . աշխարհ
իմս է ըսողը՝ ափ մը հողին ալ գոհ կըլլայ , չըն-
կող չեղնող միայն Աստուած է . ծածուկը վեր-
ջապէս կը յայտնուի . խաբողը շուտ կը խաբ-
ուի : Մ'ըլլար այն որդւոց պէս , որ իրենց մօրը
տուած հինգ թակոյկ կաթին տեղ յիտուն կը
խոստանան , անոնց պատուէրին դէմ անհնազանդ
մնալու :

Այն բանն որ քուկդ չէ , ձեռք մի զարներ ,
գողութիւն կը սեպուի . գտածդ շուտով տիրո-
ջը դարձնելու աշխատէ . թէ ոչ , ան ալ տեսակ
մը գողութիւն է . բարի ուզէ բարի կը գտնես .

ունեցածիդ վրայ մի պարծիր . հաւատարիմ եղիր դիմացինիդ , ստախօսութեան չը վարժուիս :

Վերջապէս կարգան , կարգան ու դիմացինիդ վրայ խնդան , անվնաս կազատիս , անհող եղիր , չըլլայ որ խաբուիս , այլ յարմար տեղը ջանան խաբելու , անոնց սեւին ճերմակ է ալ ըսելու ըլլաս կը հաւտան : Ահան այսպէս գիտցած եղիր ու կարծէ որ փափաքիդ հասար : Աստուած քեզի պէս խելացիին խելքը չառնէ անխելքին ալ խելք տայ :

Ահա այս է գրուածը :

ԱՍՏ. Ա՞տ է եղեր . ամօ՛թ ամօ՛թ . ի՞նչ խելքի տէր մարդիկ են ատոնք . արեւդ վկայ որ խենթն ատոնց ըրածը չընէր : Պաղտատէն Պասրա հայրը դաւկին խրատ տալու մտօք , լեզուին վրայ եկածը դուրս կը ձգէ . գլորեր պտուկը , գտեր կափարիչը կըսեն . անանկ հօրն ալ ասանկ դաւակ վայելուչ է . մե՛ծ բան , ինքքը աղքատութեան պատճառաւ ասդին անդին թափառական ըլլալուն , հարուստները վար զարնելու կը համարձակի : Աղջիկ դաւակ , կարծես թէ Աստուածարան պիտի ըլլայ , կարգան , կարգան ու խնդան կըսէ եւ ուրիշ շատ մը անվայել խօսքեր . ոչինչ , ոչինչ , պատռէ , պատռէ տա թուղթը , շուտ , շուտ , երեսը չը տեսնեմ , հիմայ անպատճառ պատռելու ես , որ արժէ :

ԱՍԹ. Շնորհ ըրէք ազնիւ օրիորդ :

ԱՍՏ: Այ հոս շնորք մընորք չը սղմիր :

ՍԱԹ: Բարկութեամբ եղած գործին հետեւանքը զղջում է :

ԱՍՏ: Ատուած չընէ . դուն իմ ըսածիս նայէ , միջոց չանցած կտոր կտոր ընելու ես :

ՍԱԹ: Ներեցէք , կ'աղաչեմ :

ԱՍՏ: Պարապ տեղն իս մի հոգնեցունէք . հիմայ . . :

ՍԱԹ: Եթէ ոչ , ես ալ հիմայ գրքին միւս կողմը կը դարձունեմ :

ԱՍՏ: Վայրկեան մը չանցած պատուելու ես Յ'րիորդ . որ դոնէ ադէտ ըսելուն փոխարէնն առած ըլլայ : Անմիտ դրսեցիներ :

ՍԱԹ: Ներսեցի քոյր , աս նամակը թէ եւ ձեր քով մանանելիս հատի չափ արժէք չունի , բայց պատուելը տիրոջը մահ պատճառել ըսել է :

ԱՍՏ: Իմ ուղածս ալ գրեթէ ատ է :

ՍԱԹ: Խիղճը երբէք հրաման չտայ ատանկ դիտաւորութեանց , թէ եւ լեզուն ազնա , աղատ խօսի :

ԱՍՏ: Իմ խիղճս հանդարտութեամբ կը հրամայէ որ պատուուի :

ՍԱԹ: Անխիղճ մ'ըլլաք ձեր ընկերին դէմ :

ԱՍՏ: Այս անգամ միայն ան բանիս համար :

ՍԱԹ: Անգամը չը հասնիր , եւ ատ եպերելի բանը ձեզի սովորոյթ , սովորոյթը բընութիւն , բնութիւնն ալ մոլութիւն կըլլայ :

ԱՍՏ: Բայց գիտէ՞ք կիրքս որչափ շարժեցաւ :

ՍԱԹ: Կիրքերնիդ հանդարտեցնելու համար , ա , բ , գ էն մինչեւ եւ , օ , Ֆ համրեցէ՞ք , բան մը չը մնայուն ալ վատահ եղէ՞ք :

ԱՍՏ: Ա՛հ Սանթինիկ :

ՍԱԹ: Հրամայէ՛ :

ԱՍՏ: Արեւդ վկայ , եթէ ատ հրապուրիչ լեզուդ չըլլար , վաղուց փշրած էի ատ թուղթը . թող կրկին քեզի աղօթող ըլլայ :

ԱՍԹ: Աստուած սրտիդ համեմատ տայ :

ԱՍՏ: Հիմայ հարկաւ Սանդուխտին պիտի տանի՞ք այդ նամակը :

ՍԱԹ: Անչուշտ :

ԱՍՏ: Բայց ինչ ըսելով :

ՍԱԹ: Ինչպէս որ չէ՞ք հաճիր :

ԱՍՏ: (Բերնէն կը փախցունէ) . չըլլայ որ գըրպանէդ գողցեր է ըսէ՞ք :

ՍԱԹ: Ճիշդ ըսածնուդ պէս : (Մեկուսի) Հիմայ հասկցանք գործին էութիւնը :

ԱՍՏ: Անունս անդամ չըտանք :

ՍԱԹ: Ատիկայ յայտնի բան մըն է :

ԱՍՏ Մէկը գեանէն գտեր էր , ձեռքը անսայ ու առի ըսէ՞ք :

ՍԱԹ: Ատ կողմէն անհող եղէ՞ք , սուտ չեմ գրուցեր :

ԱՍՏ: Վաղուան օրը տաք :

ՍԱԹ: Տեսած վայրկենիս :

ԱՍՏ Ուրեմն երթաք բարով :

ՍԱԹ: Մնացէք եւ դուք, ինչպէս որ էք :



ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԵՍ

ԱՍՏՂԻԿ ՈՒ ԶԱՐՈՒՀԻ

ԱՍՏ: Գեռ նոր պիտի փորձեմ որ բաղդս բայ է . սա վերջապէս Սանդուխտ յամառեալ մնաց , դրպանը դրած թուլթը իմ առաջ չը հանեց կարդալու . բայց սա բաղդաւոր պատահմանը նայէ , որ իր սիրականին ձեռքով դործս տեսայ , առանկ դիպուած խիտա քիչ կը պատահէր . հիմայ սա եղելութեան վրայ ո՞վ ըլլայ չը խնդար : Աղէկ գիտեմ , որ մինչեւ Սաթինիկն երթայ զինքը տեսնելու , հոգին բերնէն պիտի ելնէ , նամակս կորուսի ըսելով : Ո՛հ , ո՞ր էր թէ անխելքն անյնէր դառնար , տեսնէի արդեօք ի՞նչ ողբեր կընէ . կանգներ ինծի խրատ կուտայ , թէ մ'ընէր այն բանն ուրիշին զոր չուզես ուրիշն ընէ քեզի . ահա սոստուած խրատը , իմ խրատս դրպանս է , անխրատ : Բայց սակայն սա Սաթինիկն ալ տեսար ս , հազիւ կարող եղանք կարդացընել , բայց ի՞նչ ըսելով չէր կարդար : Քոյր իմ Զարուհի :

ԶՍԹ: Հրամանը ձերն է :

ԱՍՏ: Աղէկ գիտեմ , որ ասկէ ուղղակի ճրգնաւոր Սանդուխտին կերթայ սա աղջիկը , եւ ամակը տալով պիտի ըսէ , թէ դրպանէդ գող-

ցեր է . բայց ան ալ ամենեւին հոգս չէ , անոր գողութիւնն կըսուի :

ՁԱՐ : Ատ կողմէն մի հոգ ընէք , ոչինչ բան :

ԱՍՏ : Թէ որ մինչեւ հիմա ատանկ ըրածներուս չըայ մտածէի , հոգ ընէի , աս վիճակին չը սիրանալէն դատ , շատոնց հողին տակը գացած պիտի ըլլայի , մեղքը չեմ . սակայն ինչ օգուտ , կարող չեղայ պատուելու , որ լիովին սիրտս տեղն իջնէր ու վաճառքս առած ըլլայի , թող առնելիքս ըլլայ . հարկաւ օր մը չէ օր մ'ալ ձեռք կը ձգեմ ու իրեն դրսեցիութեանը չափը կուտամ , տեսնենք կանգունով կըլլայ ինչով . մտիկ ըրիք այն նամակին անձոռնի խօսքերը :

ՁԱՐ : Այո եւ բաւական կիրքս ալ շարժեցաւ , քիչ մնաց որ քանի մը խօսք ալ ես պիտի գրուցէի . բայց մտածեցի , որ նախ այդ Վաթիկնիկ օրիորդին հետ արդէն ծանօթութիւն չունիմ , երկրորդ՝ նամակին տէրն ինքը չէ , թէ եւ անոր սիրականը , ուստի լռութեամբ մինչեւ որ համբերեցի , սիրտս հալեցաւ :

ԱՍՏ : Աերդունեցնեմ քեզ որ ճշմարտապէս վկայէք :

ՁԱՐ : Ի՞նչ բանի համար :

ԱՍՏ : Աշխարհիս մէկ ծայրէն մըսը , հօր մը կը վայելէ ատանկ խօսքեր . թէ որ մէկը միւսին բարեւադիր մը գրէ , կարծեմ բարեւէն եւ չպէս ըլլալը հարցունելէն ուրիշ բան մ'ալ

չը դրեր , անիկայ նամակ չէր , քարոզագիրք :
 Հիմա ինչ կըսես այս խօսքիս , կը ստեմ արդ-
 եօք :

ՁԱՐ: Նրբէք առաջուրնէ Ձեր յարգութեանն
 իմացուցի անոնց ինչ խելքիտէր ըլլալնին . ինչ-
 պէս որ հայրը , անանկ ալ դաւակը . դլուխնին
 վէղար դնելու մարդիկ . ձգէ Ստուածդ սիրես ,
 մոռցիր ատ սնտաի խօսքերը . մեզի պէս աղ-
 նուականի զաւկներուն պատիւին չը վերաբերիր
 ոչ ատ տեսակ մարդոց հետ կենցաղավարիլ ,
 եւ ոչ յարաբերութիւն մ'ունենալ , խօսքերնին
 անդամ չընել . անոնք ուրիշ տեսակ ստորին
 կարգի մարդիկ են :

ՍՍՏ: Արդարեւ կը նայիմ , որ ճիշտ սրտիս
 մէջէն կը խօսիք : Ա՛հ սիրելիդ իմ Չարուհի , եր-
 ջանիկ պիտի ըլլայի , եթէ չար Սանդուխտին
 հոս եղած ատենը դու ալ դանտէիր , վասն զի
 ասանկ բաներու վրայ կը նայիմ որ շատ աղէկ
 կը խօսիք , բերնին չափը պիտի առնէր ձեզմէ
 ան ատեն , ինչպէս որ արժան է :

ՁԱՐ: Ատոր անտարակոյս եղիք , քեզի պէս
 խեղճ մը գտեր եւ ուզած կանգունովը կեր-
 պաս տուեր է :

ՍՍՏ: Քոյր իմ , մինչեւ որ քեզ ատ աղջկան
 չը ներկայացնեմ , սիրտս չը պիտի հանդստա-
 նայ . վաղն ալ հոս կը հրամէք :

ՁԱՐ: Եթէ կամք ընէք :

ՍՍՏ: Մեծ պատիւ կը համարիմ . հիմակու

հիմա հրա:ժեցէք, երթանք թիչ ժը վերի սրա-
հը գրօնուէք եւ ձեզի պատիւ մ'ընեմ :

ՁԱՐ: Կնչպէս որ կուզէք :

ԱՍՑ: Ելնենք ազատ, ազատ ծովին վ բայնա-
յինք որ սրտերնիս բացուի :

ԱՍՑ: Եատ աղէկ կըլլայ :

ՎԵՐՁ ԱՌԱՋԻՆ ԵՐԱՐՈՒԱԾԻ



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ



ԱՌԱՋԻՆ ՏԵՍ

ՍԱՆԴՈՒԽՑ Միևակ

Ճամբան նամակին կորստեանը վրայ ողբալով
կանցնի:

Աստուանձ իմ, մանկութեան հասակիս մէջ
դեռ այսօր քիչ մ'ուրախութիւն զգացած, դեռ
նոր երեսիս վրայ դուարիժ ժպիտ մը փայլել ըս-
կըսած, արտասուածոր աչքիս ցօղերը դեռ
նոր սրբած, նվ Տէր, եւ այս ինչ դիպում,
այս քանի անգամ է խղճարույս քաշածը. այս
քանի հարում. մի՞թէ թշուառութեան համար
ծնաւ զիս մայրս, մի՞թէ հանապաղ արտասուք
թափելու համար տրում եմ ինձի առ աչերը,
հերիք չէ՞ր մի՞թէ օրօրոցին մէջ կղկղալով նո-
րաւառ այտերէս վար ողողած հեղեղիկները,
կանուխ չե՞ն այս ցաւերն Աստուանձ իմ, մանա-
ւանդ վշտածին սրտի մը համար:

Եօթը տարի կըլլայ կաթողին մայրս կորու-

սած յաւիտենականութեան մէջ, եղբայրներս
նոյնպէս, այսօր ալ միայն թշուառ հայր մը մը-
նացած ձեռքս աշխարհի վրայ, եւ այն սա-
ժամիս իր միակ զաւկէն հեռի, օտարութեան
մէջ, մինչ կը փութայ դժբաղդ որդւոյն ար-
տասուքը սիրաբոյր նամակով մը քաղցրացու-
նել, ուսումնական եւ բարոյական խօսքով մը-
խիթարել, այն ալ չեմ գիտեր, ինչպէս եւ մի
անխիղճի ձեռքը յանդգնեցաւ գրպանէս կո-
ղոպտել, գողնալ, գողնալ կըսեմ, այ՛ն, զի
ընկնելու տեղ մը չը կայ, երբէք: Արդեօք
Աստղիկը . . . այն ամբարիշտը . . . գողցաւ,
բայց ինչ մտքով . . . չը գիտեմ, կորուսի գը-
նայ, ալ լաց ու կոծ արժէք չունին ինծի:

Թող արդ պատռի գետինը, բացուէ գե-
րեզման իմ, սեւ շիրիմ, երջանկութեան օթե-
ւան, լոկ սեւ հողին տակ ցաւերուս կրնամ վախ-
ճան մը տալ, աշխարհի վրայ՝ անկարելի է
վասն զի դժբաղդութիւնը հիւանդութիւն մը
չէ, որ բժիշկներու դարմանին կարօտի: Սիր-
տըս էր այն նամակը, զոր կորուսնելով, կեանքս
ալ կորուսած կըլլամ: Ա՛հ Աստուած իմ, պէտք
էր որ այս արկածն ալ վերջապէս խռովէր
իս: Աթէ Աստուածութեանդ գէմ չէ սրտէս
ծխած գանգատները, Արարիչ իմ, ներկայ վայր-
կենէս պատրաստ եմ, ան վերջին շունչս, տուր
վերջ կենացս տխուր օրերուն. այս հասակին
մէջ ցաւով ու հեծութեամբ ապրելէն շատ բա-

բի է կակուղ հողին տակ հանգչիլը : Երկինք ,
 Երկինք , առ խօսքերը դժգոհութիւնն չեն որ
 քեզի կուղղեմ : Ո՛հ , երանի՛ թէ , կը ճմլի սիր-
 տըս ըսել , այրելով , մոխիրը ծրար մ'ըրած ,
 կուրծքիս վրայ պահէի 'ի յիշատակ որդեանք
 հօրս , բայց 'ի դուր . . . :

Բաղդը անմիտներուն համար է կըսուի , վա-
 ւրն դի անոնք ասանկ անտեղի խօսքին հա-
 լատ կընծայեն . բայց առ ալ սուտ չէ , որ դըժ-
 բաղդութիւնն ալ ինծի պէս ողորմելիներուն է
 ժառանգ մնացած . դի գիշեր ցերեկ թիկնա-
 պահ դինակիրներու պէս գլուխնուս վրայ ար-
 ձանացած , թոյլտուութիւնն չունի , օր մը գո-
 նէ խնդումներես եւ ուրախ սրտով անցունել :

Գեռ չեմ ուղեր հաւատալ , Աստուած իմ , որ
 ամենասիրելի հօրս դրկած սիրագիծ համակը
 կորուսած ըլլամ . ամենքայլափոխիս գետինը կը
 դարձունեմ աչերս , դանի գանելու յուսով .
 ձեռքս անդադար գրպանս կը տանիմ , որ կա-
 րելի է մէջը թողած ըլլամ . — ո՛չ , ո՛չ . թռչած
 թռչնիկն անգամ մ'ալ ձեռք չանցնիր , Եղնկ
 մատաղ հատակիս , թէ որ Սանդուխտի համար
 կարելի ըլլայ վերատին ծնանիլ , կարելի է նաեւ
 որ ան ատեն առ տարաբաղդութեանց չը տիրա-
 նայ : Անգութ ճակատագիր . միայն համբերու-
 թիւնը այս վիճակիս կրնայ մխիթար ըլլալ , բայց
 անոր համար ալ , սիրտ պէտք է : Աարծես
 մինչեւ ցարդ երեւակայութիւնս կը խաբէ դիս ,
 ո՛չ , ո՛չ :

Ո՛վ դու միակ յոյս Տէր իմ, ժամ մ'առաջ
ճշմարիտ բարեկամս ազնուարարոյ՝ Սաթիւնիկը
խղճարոյս դարձնէիր . ուր զնայեր է արդեօք .
ուր մնաց, դար որ արիւն արտասուացս կա-
թիւներն իր գողը թափէի . աշխարհի վրայ մն
է միակ մխիթարս, կայ արդեօք ճշմարիտ բա-
րեկամութենէ աւելի քաղցր կեանք մը . քաղցր
թշուառութեանց մէջ անգամ . . . : (Ձեռքերն
իրարու անցուցած կերթեւեկէ) : Սաթիւնիկ ազ-
նիւ բարեկամս, դպրոցական խոհեմ ընկերս, ա-
նի կազնուացնէ իմ դոյութիւնս, բարեկամ է ոչ
միայն ուրախութեան այլ եւ ցաւի օրերու .
երջանկութեան եւ անդորրութեան օրերու բա-
րեկամը ծպտեալ աւազակներուն կը նմանի, մա-
նաւանդ սինլքոր հացկատակներու, որոնք ո-
րովայնին պարարելէն եւ քսակին լեցունել-
նուն պէս կ'իծիկը կը դնեն : Նթէ ճշմարիտ բա-
րեկամութիւնը չըլլայ, մարդու կեանքը անտա-
նելի բռնի մը պէս կը ծանրանայ իր վրայ, մա-
նաւանդ երբ ապերախտութիւնն ու անհաւա-
տարմութիւնն ալ տեղի դանեն անոր չորս կող-
մը պատելու : Ա՛հ, բարեկամ դէզ կենաց :
(Կերթեւեկէ) :



ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍ

ՍԱՆԴՈՒԻՅ ՈՒ ՍԱԹԻՆԻԿ

ՍԱԹ. Ո՞ւր այդպէս սիրեցեալդ իմ Սանդուխտ, ո՞ւր բարով:

ՍԱՆ. Ա՛հ, ո՞ւր մնացիր, ո՞վ դու միակ սրբաբաշտերու թիւնը, քոյր իմ Սաթինիկ:

ՍԱԹ. Ժամ մ'է, սիրելութեանդ կսպասեմ. անգամ մը տուն եկայ չը կայիք, սիրտս անհանգիստ ըլլալով փութացի գտնել ձեզ, դիւրանցի որ ինծի եկեր էք. եւ ահա Աստուծով եղաւ որ իրարու հանդիպեցանք. փնտռելով չը գտնուիր կըսեն, այլ պատահամբ: Եւ արդ, ձեզ չտեսնելէս 'ի վեր կենցաղավարութիւնսիդ ինչպէս է:

ՍԱՆ. Գոհութիւն Աստուծոյ մինչեւ այս ժամիս, որ ամեն կողմանէ անմխիթար չը թողուր դժբաղդութեան խրամներուն մէջ գլորտըկող թշուառ մը: Արագիլին կեանքը ըստ ըստով կ'անցնի: Բարի դալուստ:

ՍԱԹ. Քաղցրիկ տեսութեամբդ: Բայց ատ ինչ տխրութիւն, ինչ շառագունութիւն դիմաց. աչերըդ կրակի պէս կարմրացած, արցունքն ալ ծովացեալ կը ծածկէ զանի, կարծես թէ հրոյ ճարակ եղած քաղաքի մը վրայ. ինչ ծանր վտանգ է ձեր սիրտը վշտացնողը, սրտակից Սանդուխտս:

ՍԱՆ. Ոչինչ քոյր իմ:

ՍԱԹ. Այդ տխրութիւնն ու կերպարանա-

փոխութիւնը ոչնչութենէ՝ յառաջ դալն անհնարին
է . մարդուս դէմքը սրտին թարգմանը կը սեպ-
ուի , որ ցաւոց ժամերուն տխուր եւ զուարթ
ժամերուն ուրախ տեսքով մը կը ներկայանայ ,
եւ ահա տխուր է ձեր դէմքը : Ի՞նչ , մահ-
կանացու կենացդ վրայ կողքաս , գաղտնի ըլ-
լալու էր եւ քու սիրելի բարեկամէդ . եւ թէ
որ առաքինի հօրդ ճամբան կուլաս՝ կարօտա-
կէդ սրտէդ թելադրուած , կարծեմ լացը վայե-
լուչ չէ . թէ որ տարօրինակ դիպուած մ'է պա-
տահածը , այսինքն , չար լուր մը , ձեր անձին
դէմ դաւադրութիւն մը , բարեկամներէդ ցաւ
մը եթէ տեղի տուին ձեր անուշիկ սիրտը դառ-
նացնելու , կարծեմ չէք հաճիր հաւատարիմ
քոյրէդ ծածկելու . վասն զի քաջ գիտեմ , որ
ձեր գաղտնիքն իմս ալ է : Բայց սակայն , թէ որ
ինձմէն է այդ ցաւը , թէ որ մեր աստղերուն
մէջ տեղը լուսոյ արդելիչ մօլորակ մը մտաւ ,
թէ որ մեր սէրը , որ անչէջ հուր մ'է եւ միայն
մահը կրնայ բաժնել առանց մարելու , զանի
սառնացնելու պատճառ մը երեւան ելաւ , ո-
րոնք անհաւատալի են ինձ , վերջապէս , քոյր
իմ , մի պահէք ինձմէ . բայէք ձեր տխրագ-
գեաց սիրտը , տեսնեմ վրան պատած վշտի մա-
ցառները եւ փութամ բոցին բերանը տալու .
բայց սիրտդ , խօսէ ազնիւ Սանդուխտս :

ՍԱՆ: Քոյր իմ Սաթիւնիկ :

ՍԱՔ: Յէք ի՛նչ :

ՍԱՆ: Նախ, յերկինս Աստուած, Բ. աշխարհայ հայրս եւ Ք. դու ես ամենասիրելիս: Աստուած մէջ գաղտնիք պահելն անհնար է. հօրմէ պահելու գաղտնիքներս ալ վկայ սիրտս, որ ձեր սիրելու թեանէն չեմ ծածկեր. դու ես վրշտակիր սրտիս գարմանը, դու՛ թշուառութեանս մէջ քաջակեր, դու՛ արտասուացս ցամաքեցուցիչ. դու՛ ազնիւ եւ հաւատարիմ բարեկամս. ոհ, բարեկամ իմ, սիրտ իմ. վերջապէս դու՛ ընկեր այս դժբաղդ եւ այն երջանիկ օրերուս:

ՍԱԹ, Գժբաղդութիւնն ալ միշտ քու անմեղ սիրտդ կը դանէ իր ճախարհն վրայ դարձնելու, ինչ վտանգ է որ ձեզ խոցելով բաժնուած է եւ հիմայ մխիթարութեան կը կարօտիք. պատրաստ եմ միշտ մինչեւ կեանքս վտանգի մէջ իյնայ, ձեր տխրութիւնը փարատելու. բայց ինչ դժբաղդութիւն եւ ինչ մխիթարութիւն:

ՍԱՆ: Այո, ինչպէս որ հողին բարեբերութիւնը աաքութեանէ եւ խօնաւութեանէ կախում ունի, անանկ ալ դժբաղդ մը մխիթարութեան կարօտ է միշտ:

ՍԱԹ: Նախասխնամութիւնը, որ մեր սրտերը բարեկամութեան եւ ընկերութեան սիրոյ քաղցրը թելերովը միացուց, նախ՛ ձեր սրտին արդարութեանը նայեցաւ. գիտցաւ, որ դուք առաքինութեան հրեշտակ մ'էք. թէ եւ երբեմն վաղանցուկ ցաւոյ ենթակայ ալ ըլլաք,

բարեկամութեան սիրովը կանուխ կը քաղցրանայ, շուտ կը մխիթարի ձեր սիրտը, մի արտմիր օէր իմ, մէկդի նետէ դիմացդ արխաբութեան վարագոյրը, սրբէ քաղցրահայեաց աչքիդ արտասուացող ողորմունքը, ուրնիս նշնիր. չես տեսներ որ այդ վիճակիդ ականատես գուարթութեամբ կը շարժիմ, իբրեւ թէ անդդայ. յայտնէ գաղանիքդ, դարմանը գլխուն վերեւ կը գտնես:

ՍԱՆ: Ի՞նչ համարձակ լեզու մ'ըլլալու է քոյր իմ որ իր ցաւերն իր բերնովը պատմէ. արդարեւ լեզուս առաջ չերթար անանկ խօսքի մը մէջ . . .

ՍԱԹ: Այդ խօսքը մինչեւ որ չըսէք, այդ ցաւը մինչեւ որ չը պատմէք, որուն դարմամանը գրպանս է, չէք կարող խաղաղիլ:

ՍԱՆ: Մէր իմ կաղաչեմ խօսքդ մի ծամծամեր. անօթի թռչնիկի մը բերնին դիմաց ցորենի հասկ մ'առած կանգնիլ, եւ անոր անօթութիւնն աւելցնելու պէս են ձեր խօսքերը. մի այդչափ այլարանօրէն պարապիք, հանդարտեցուցէք սրտիկս, դի յուսով եմ, որ կարող էք. ձեր շարժմունքը որոշ նշանակութիւն մ'ունի:

ՍԱԹ: Ո՞չ չեմ ուզեր ձեր սիրտը երկար ժամանակ հեծութեան ենթակայ ընել, չեմ ուզեր մխիթարութիւննիդ ուշացնել: Ա՛յ քոյր իմ, ի՞նչ քաղցր կորուստ ըրիք այսօր:

ՍԱՆ: Ի՛նչ, կորուսա :

ՍԱԹ: Այո՛, քոյր իմ. կորուստ եւ ձեր արթու-
թեան միակ պատճառ կորուստ մը :

ՍԱՆ: Մի՛թէ դուք գտնօք զայն . ահ քոյր իմ
մի վերայեալ կերպով խօսի՛ք, կաղաչեմ :

ՍԱԹ: Խաղաղէ՛ ուրեմն ճշմարիտ ընկեր, ա-
ռաքինազարդ որդեակ, ազնիւ բարեկամ մի
խռովիր . (Նամակը դրպանէն հանելով Սան-
դուխտին կուտայ) ահա այս է սրտիդ հարուա-
ծը, այս է աչերդ արտասուաց ծով դարձը-
նողը, այս է վերջապէս կորուստդ ու փնտա-
ծըդ, այս է . . . :

ՍԱՆ (Նամակը կառնու եւ մեկուսի) Ատ-
ուանձ իմ ձեր եմ, ես եմ խօսողը, ի՛նչ է աս
տեսածս, ճիշդ սիրելի հօրս խրկած նամակը,
- ո՛չ, ո՛չ . գիշերուան երազներուն մէջ կը տա-
տամսիմ, ըսէք ինձի բարեկամներս, ըսէք,
յայտնեցէք վիճակս, չըլլայ թէ երեւակայութիւնս
իս խաբելով իրեն խաղալիկ ընէ :

ՍԱԹ: Ո՛չ քոյր իմ ո՛չ, երեւակայութիւն մերե-
ւակայութիւն գործ չունին հոս . ահա ես սրտակից
ընկերուհիդ Սաթինիկը, ահա դու Սանդուխտ իր
ճշմարիտ բարեկամը, ²եւ ահա ձեռքդ՝ սիրելի
հօրդ զրկած նամակը :

ՍԱՆ: Այդ ինչ համբուրելու շրթունք, որ
քաղցրիկ ներդաշնակով կը թոթովեն, հողե-
հատորդ իմ Սաթինիկ, արժանի անկեղծ սիրոյս :
(Արդառնայ նամակին) եւ դու, ³ս կորուստեա-

լըդ իմ սիրաբոյր նամակ (համբուրելով) ուր
 գնացիր թռար. ինչ անընդունելութիւն գտար
 Սանդուխտէն. ինչ անհաւատարմութիւն, այն
 ինչ դառն արտասուք էր թափել տուիր ինձի.
 երբէք գութ չունեցանք դժբաղդիս. ո՛հ. բայց
 ամեն վիճակի մէջ դարձեալ քաղցր ես ինձի,
 եկուր հաշտուինք քեզի հետ կարօտակէզ համ-
 բոյրով. (Ար համբուրէ նամակը) դարձիր վե-
 րըստին Սիրելւոյդ գիրկը, հաւատարիմ եւ ճշ-
 մարիտ բարեկամիս շնորհիւ: Սակայն ինչպէս
 եղաւ որ աս նամակը ձեր աղնուութեանը ձեռ-
 քը հասաւ, եւ ուրկէ:

ՍԱԹ: Անկէ որ գրեթէ չէք յուսար:

ՍԱՆ: Ար ճանչնամ արդեօք:

ՍԱԹ: Այո՛ կը ճանչնաք՝ եւ այդ ծանօթու-
 թիւնը ձեզի դժբաղդութիւն մը սեպած էք:

ՍԱՆ: Ձեր խօսքին կերպարանքը անանկ մա-
 կաբերել կուտայ ինձի, որ անշուշտ անգութ
 եւ անկիրթ Աստղիկն առած ըլլալու է այս նա-
 մակը եւ այն ալ գրականէս . . . այո՛ այո՛ գըր-
 պանէս չեմ սխալիր ըսելու, գրականէս:

ՍԱԹ: ձիշդ ըսածնուդ պէս:

ՍԱՆ: (Մեկուսի) Արդարութիւնը անօրինաց
 ձեռքին մէջ թէեւ քիչ մը ժամանակ կը յաղ-
 թուի, բայց մեռնիլն անհնար է:

ՍԱԹ: Բայց ինչպէս եղաւ որ ատ շարասիրտ
 օրիորդին յափշտակել տուիք այս նամակը:

ՍԱՆ: Արդէն քանի մը հեղ ցաւօք սրտի ձե-

դի յայտնած եւմ ատ մեծատան անկիրթ զաւ-
 կին զգուելի բարքը : Հօրս այս խրկած նամա-
 կը ուրախութեամբ սրտի դեռ նոր ընդունած, երբ
 զուարթութեամբ կը կարդայի, հազիւ լմնցայ չը
 լմնցայ, տեսնեմ որ ատի գլխուս վրայ արձանա-
 ցաւ . իր անքաղաքավարութեամբ տուած բա-
 րեւին դէմ, Աստուծոյ բարին հանրմ չըսելուս
 յանկարծ բարկութիւն մ'եկաւ վրան եւ սկսաւ
 իր մեծութեան փառքովն իմ աչքս ներկելու
 աչխատիլ, գիտութիւնը պարսաւել, դիս նա-
 խատել, եւ այլն եւ այլն . բոլորովին անձանօթ
 չէք կարծեմ տհաճ բարքին :

ՍՍԹ: Այո՛, ձեր միջնորդութեամբը մէկ եր-
 կու հեղ հետը տեսնուելու դժբաղդութիւնն ու
 նեցայ :

ՍՍՆ: Աերջապէս, շատ մը վիճարանութիւն-
 ներէ վերջը միտքը հասկցայ, որ գրական գը-
 րած թուղթս կարդալ կուզէ եղեր՝ Օրագիր
 կարծելով, որպէս զի եթէ խնդարու բաներ կայ,
 անով զուարճանայ . հասկցուցի իրեն թէ օրա-
 գիր, կատակարանութեան թերթ (Շարիւլարի)
 չէ ատի, կարծածէդ շնտ հեռի է . ատիկայ մըտ-
 քովն ըսած խօսքիս չը համոզելով, անշուշտ
 իս խօսքի բռնած կէտերուն կերպով մը գրակա-
 նէս գողցած է . եւ ինչպէս կրնայի կարդալ օ-
 տար եւ անկիրթ մարդու մը քով, Քոյր իմ
 Սաթինիկ :

ՍՍԹ: Սիրեցեացդ իմ :

ՍՍՆ. Նամակիս գայտուեան լուրը ձեռի հա-
ղորդելու եկած ժամանակս փողոցին մէջ ձեռքս
գրպանս տանելով այն ինչ նամակս չգտայ,
կարծես երկինք երկիր գլխիս վրայ կործանե-
ցան. եւ գոհութիւն Արարչիս որ կրկին ան-
մխիթար չը թողուց իս: Բայց ինչպէս եղաւ որ
ձեր սիրելութեան ձեռքը հասաւ:

ՍՍԹ. Զարմանալու կերպով: Փողոցէն ան-
ցած ատենս իս կանչեց եւ հրդեհէն փախուտ
տուածի պէս, որոնք ջուր, ջուր գոչելէն ուրիշ
բան չէն կարող ընելու, առ ալ իրեն գնալուս
պէս, շուտ ըրէ շուտ, սա թուղթը կարդաւ ը-
սաւ. ես ալ միշտ հանդարտութեամբ, հե-
զութեամբ վարուեցայ հետը: Քողին սիրտը դո-
ղի մէջ կըլլայ կըսեն, այնչափ կաճապարէր որ
կարծես թէ դինուորները սուր 'ի ձեռին ետե-
ւէն կը վազէին դինքը բռնելու. վերջապէս
նայեցայ որ նամակը ձեր աղնուութեանն է,
չորս կողմս գծուարութիւնը պատեց, դի այն
աստիճան կը բռնատէր զիս կարդալու, որ
մինչեւ անգամ ծեծել ուզեց. ես ալ ինչ ընեմ,
մտքէս՝ առ ըրածիդ փոխարինութիւնն ըսելով
իմ քովէս սուտ նամակ մը ստեղծեցի:

ՍՍՆ. Ինչպէս:

ՍՍԹ. Այսինքն նամակին գրուածէն դուրս
նամակի ձեւով իրեն ուղղուած հակառակ խօսք
շարադրեցի; եւ հազիւ կրցայ խնդարս զապել
որ չըլլայ թէ յայտնի ըլլայ:

ՍԱՆ: Ծաղրելիւ առարկայ . զարմանք . Բայց
այդ ստայօղ նամակը մտքերնիդ կրցամք սգա-
հել :

ՍԱԹ: Այո՛ գրեթէ այսպէս էր .
(Հոռ 36^{րդ} երեսին նամակը կը կարդայ) :

Այսչափ :

ՍԱՆ: (Ծիծաղելով) Այդչափ է քոյր իմ , վեր-
ջացաւ . ատ ի՞նչ ճարտար հնարում . ազնիւ
քոյր իմ վայելուչ ծաղրածութիւն մը կատարեր
էք , ձեռքդ տուր , (Ձեռքը թոթուելով) շատ
հաւանեցայ , կեցցենս :

ՍԱԹ: Արդէն վստահ եմ որ իմ ըրածիս միշտ իմ
սիրելիս ալ կը հաւնի :

ՍԱՆ: Մեծ եւ պատշաճ յարմարութիւն մ'ու-
նի այդ հնարումդ այն անձոռնի օրիորդին հա-
մար : Բայց հաւտանց :

ՍԱԹ: Ի՞նչ , կարդալ գիտէ որ չը հաւատայ :

ՍԱՆ: Ահա՛ ասի ապացոյց մ'է որ ատ տեսակ
մարդոց գործը այս նամակին եղելութեանը պէս
կոյր զկուրայն կը տեսնուին :

ՍԱԹ: Քանցը խօսքերով , շնորհ ըրէք , սանկ
կըլլայ , նանկ կըլլայ ըսելով մինչեւ որ նամակը
ձեռքս աղատեցայ , ի՞նչ դժուարութիւն քաշե-
ցի . սակայն ձեր սիրոյն համար ամենամեծ նե-
ղութիւններն անգամ , ամեն ատեն ինձի ոչինչ կը
սեպուին :

ՍԱԹ: Ատոր կասկածելու տեղի չունիմ եր-
բէք , որ եւ իցէ կերպով մը սրտիս երախտա-

գիտութիւնը չեմ կարող ձեռի բացատրել, եր-
ջանիկ եմ ձեր ընկերութեամբը՝ թշուառու-
թեանցս մէջ անգամ: Ո՛հ անզգամ օրիորդ,
բնաւ խիղճ չունի, եւ ինչպէս կրնայ ունենալ
քանի որ բարոյական կրթութենէ զուրկ է,
եւ աշխարհ միայն իրեն համար ստեղծուած կը
կարծէ: Խեղճ արարած:

ՍԱԹ: Ողորմելի ասուն:

ՍԱՆ: Բայց քոյր իմ Սաթիւնիկ:

ՍԱԹ: Խօսեցէ՛ք:

ՍԱՆ: Սիրելի հօրս նամակը կրցանք կարդալ:

ՍԱԹ: Ո՛չ, Հաղիւ թէ խաբւրայ նամակ մը
յօրինեցի:

ՍԱՆ: Ուրեմն, եթէ ձանձրութիւն չըլլայ ձեր
ազնուութեանը, բարեհաճեցէ՛ք ուշադիր ըլլա-
լու:

ՍԱԹ: Մեծապէս շնորհակալ կըլլամ, պատիւ
կը համարիմ լսելու:

ՍԱՆ: Տեսէ՛ք ինչ խմաստալից եւ խրատական
խօսքով զարդարուած նամակ մը:

Ահա:

Հողեհատոր որդեակ իմ

Սանդուխտ

Քաղցր եւ ստիպողական է որդիական սէրը,
Սիրելիդ իմ, քաղցրաժպիտ այտերդ գիրկընդ-
խառն համբուրելով քեզմէ բաժնուելէս՝ ի վեր,
ով դու միակ սրտիս հատորը, ո՛չ սեւագէմ

Նրկնից շուքին ասկ առիւծի պէս պառկած ան-
 շարժ ծովին օրհաս արջերու նման կատաղող
 պէտայ վրայ օրօրուող նաւին մէջ կրած յուսա-
 հատ սոսկումս, եւ ոչ ցամաքին վրայ Յգիպ-
 տական մանանային պէս տեղացած դէզ դէզ
 սառնասէր ձիւներուն մէջէն ճանապարհորդե-
 լու համար քաշած վտանգներս, երբէք կարող
 չեղան մոռցնել քեզ յիշողութեանս առաջ,
 (Քոյր իմ, տես ինչ անտանելի նեղութիւննե-
 րու մէջ ընկեր է հայրիկս) Արդիական սիրոյ
 դաղախարը մտացո տախտակին վրայ այնպէս
 պատկերացած է, որ ժամ մը չը կայ խորհրդա-
 ծութեանս ու յիշողութեանս առարկայ չըլլաս.
 եւ ահա կարճատեւ ճանապարհորդութեանս
 մէջ, առաջին անգամն է որ քեզի, հարադատ
 դաւկիս կուղղեմ խօսքս, մինչ ցայս կէտ շնոր-
 հիւ Արարչին ունեցած առողջութեանս վրայ
 վատահացնելով քեզ, հանապազօրեայ հայրա-
 կան խրատներս ալ կրկնելու կը փութամ. եւ
 քաջ դիտեմ, որ ականջիդ օղ եղած են ար-
 դէն իմ քաղցր ու թեթեւ պատուէրներս:

Սիրանունդ Սանդուխտս. (նհ հայրս է աս
 խօսքն արտասանողը, սիրելի հայրս) Աստուա-
 ծակոյս կողմանէ որդւոյ դաստիարակութիւնը,
 նախ՝ ծնողաց յանձնուած ըլլալով, անհրաժեշտ
 պարտաւորութիւն ունին անոնց միտքը հասկա-
 ցողութեան եւ ըմբռնման ենթակայ ըլլալու ըս-
 կըսած օրէն, անոր արմատը առաքինութեան

Եւ բարոյական կրթութեան ջրովն ոռոգել ,
մինչեւ որ կատարելութեան աստիճանին հաս-
նելով , հաստատուն գաղափարներով տպաւորի
Եւ արմատանայ ըղձիկն ու միանգամայն բնա-
ւորութեանը մէջ . եւ ահա այս սկզբունքը
ուսման միջոցաւ կըլլայ :

Նրկինք ու երկիր վայ կը կարդան այն ծը-
նողաց , որ իրենց միտքը այլ եւ այլ նախա-
պաշարմունքով սեւցած եւ ումպէտ առարկայ-
ներով լցուած , իբրեւ անսուտ ու բնական ճըշ-
մարտութիւն մատղահաս մանուկին գլխին պա-
րապ սափորին մէջ կը պարպեն . եւ որուն գա-
ղափարը մոլոր լծորդութիւններով կը խանգա-
րի եւ դժուար , կամ լաւ եւս , անհնար կըլլայ
յուզողութիւն հրաւիրել : Ծնողք ընդհանրապէս
այնպէս համոզուած կերեւին , որ իբր թէ Տէր
Աստուածը զիրենք միայն որդւոց նիւթական
պէտքը հոգալու համար ստեղծած է , առանց
բարոյական պիտոյից հոգածութեան . – Հարա-
չար դատողութիւն . որուն արդիւնքն է թըշ-
ուառ ապագայ մը . յորդւոց յորդի . այս մոլո-
րութեանց մէջ սիրելի գաւակս , քու ծնողքդ
այ գտնուեցան :

Յիշեցէք , կը ճմլի սիրտս , կը տրորին աղիքս
ըսելու , ձեր կաթողին մօր սեւերես մահուան
Պայրկեանց մանգաղներուն առաջ հասկի պէս
քաղուիլը , հարաչար զոհուիլը , որ միմիայն
անցեալ երեք եզրայրներուդ դատարակու-

թենէ զուրկ մնալնուն պատճառաւ ծանր վտանգ-
 ներու դարանին մէջ ընկնելով, կանուխ, կա-
 նուխ գերեզմանին քարն իրենց վրայ տապա-
 լիլն էր. մարեցաւ անոնց կենդանի ճրագը, եւ
 անս այսօր բարգաւաճ ընտանեացս բուրաստա-
 նին մէջ միակ դու մնացիր անթարչամ ծաղիկ
 պարտիզպանին՝ սգակիր հօրդ ձեռքը. եւ անդ,
 ինչպէս որ անոնց, անանկ ալ քո արդար ա-
 բիւնդ ինծմէ պիտի պահանջէ Նրկինք. ուրեմն
 աշխատելու եմ, քեզ բարեկրթութեամբ դաս-
 տիարակելու դպոցի մէջ, ուր կստանայ մարդ՝
 մարդկութեան պահանջմունքները: Որդ եանկ իմ,
 մինչեւ որ ժամանակը ձեռնափայլ ալիքներով
 երեւներս ծածկած, ծերութեան ընկեր դաւա-
 դանը ձեռքս, երկնից պատգամը դայ հնչեցը-
 նելու ականջիս, թէ, « Հայր Գարեգին, այսօր
 վերջ երկրաւոր կեանքիդ. դարձիր, ժամանակ
 է հողէ անկողնոյ մէջ հանգչելու » . այն ատեն
 դու ալ անուշիկ Սանդուխտս, գրկելով իս,
 ինչպէս ես քո մանկութիւնդ, գրկելով որդեանկ
 իմ, բիրերս աշիս վրայ գոցած, շրթունքս ի-
 րարի միացնելով, բազուկներս կուրծքիս վրայ
 ծալլած, գերեզմանին փոսին մէջ դնես ու հող
 լեցնես վրաս. հող որդեանկ իմ ... երջանիկ օր ...
 եւ անս մինչեւ այն ժամանակ, յերկնից պար-
 տաւորեալ եմ քեզ բարոյսապէս խնամելու. եւ
 մինչդեռ ես քո հայրդ պարտազանց չը գըտ-
 նուիմ անլուծելի խոտմանս մէջ, անկէ անդին,

արին քո 'ի գլուխ քո ըլլալով, անպարտ կըլ-
լամ յարենէդ : Փորձառութիւնն օր քան զօր
սովրեցուց ինձի հօր մը պարտականութիւնը :

Անդամ մը յիշելու ես, սիրելի դաւակս, որ
ապագայ բարօրելու համար ունեցած գրգիռս
էր, որ ստիպեց իս բնիկ հայրենիքս թողլով,
յաշխարհէ յաշխարհ թափառիլ : մինչեւ որ օր
բարեբաղդութիւն ստանամ տեսնել քեզ ուս-
մանց մէջ յաջող, բարոյական կրթութեան
մէջ վարժ : եւ տհա՛ս այս իղձով կապրի աշ-
խարհի վրայ ունեցած միակ հայրդ : Հուզեցի,
քեզ հայրենեաց տղիտութեամբը թունաւորել,
որ զուրկ է լուսաւորութեան ճրագէն, զուրկ
է ուսման ամենակարեւորութենէն եւ որով ցաւ
է ինձ ըսել, զուրկ ապրուծտ ճարելու դիտա-
րութիւններէն : իբրեւ գառն, գայլերու ճիրան-
ներնէն աղատելու ձեռք մը չէ տեսած եւ ե-
թէ տեսած է, — շատ տկար, անզօր իր խեղճ
վիճակին օգնութեան : Քիտցիր որդեակ իմ, որ
հիւանդ է հայրենիքդ եւ քեզի պէս հայրենա-
կիցներէն կապասէ դարմանը : Մարդիկ իրենց
կեանքը հայրենեաց կը պարտաւորին, մինչ ա-
նոր մէջ ստացած են, ինչպէս ես զքեզ . . .
Մէկը չը համարձակի ըսելու, թէ հայրենեաց
օգուտ մ'ընելու անկարող եմ. — կը սխալի .
գոնէ արտին քովէն անցնելնինի կրնայ որոմի
ճիւղ մը արմատախիլ կորզել, խիղճին ծառայող
մարդը, մարդոյ պարտաւորութենէն անհնար

է որ խոյս տայ , առանց վատութեան գերի ըլ-
լալու :

Արդեակ իմ քեզի կսպասէ հայրենիքը . ես
այ քեզ առանց բարեկիրթ քաղաքացի մ'եղած
տեսնելու , չեմ կարող անոր գիրկը դիմել , ո-
րուն վզէն տղխութեան սեւ լուծն արձակուած
չէ գեռ : Պրեանք քո առաջ են եւ անշուշտ ա-
նոնցմէ բաւական տեղեկացած ես հին Հայաս-
տանի տղխութեան ձեռքէն կերած հարուած-
ները , զորս դարերն անգամ կարող չեղան բը-
ժըշկելու , եւ չը պիտի բժշկուին մինչդեռ անձ-
նական շահը ազգային շահէն նախադաս կը սեպ-
ուի , որով անկարելի կըլլայ բաղմաց ձայնը մէկ
ձայն ընել : Սիրելի դուակս , այս խօսքերս եւ
խրատներս եթէ աղջկանց համար ուսումը վա-
յելուչ չէ ըսողները լսեն , կը քարկոծեն մեզ .
ուր էր : Առնց վրայ արդէն երկարօրէն խօսած
եմ քեզի :

Վերջապէս հարազատդ իմ Սանդուխտ . գիտ-
ցիր ժամանակիդ յարգը , ինչպէս մեծատունք
դեղնած ոսկիինը , պարապ տեղը մի վատներ .
խորչէ ունայնախօսութենէ եւ զուարճասիրու-
թենէ , որ յատուկ է ձեր սեռին . մարդուէ ա-
ռաքինութեան հրահանգներով . տղէտներն ի-
րենց ծուռ ճամբէն ետ դարձնելու ջանք ըրէ :
Աղօթքը , որ հողւոյն եւ մարմնոյն կենսատուն
է , մի դանդաղիր հանապաղ առ Աստուած նը-
ւիրելու . յիշէ , որ մահկանացու ես : Նախա-

պէս ճշմարիտ սէր նուիրելու ուխտէ՛ Աստու-
ծոյ եւ ազգիդ . Հայ անուանը . զոր կը կրես վը-
րադ , պահէ անոր պատիւը , ապրէ ճշմարիտ
հայութեանս ոգւով . մէկ խօսքով , այն միտքը ,
զոր Տիեզերաց Արարիչը հաստատած է գլխիդ
մէջ , կը պարտաւորեցնեմ քեզ՝ բարի առարկա-
ներու գաղափարներով լեցունել :

Ո՛վ դու աչացս լոյս որդեանկ իմ Սանդուխտ ,
անն ասոնք են իմ կարճատեւ ճանապարհոր-
դութեանս մէջ մտքիս առարկայները . զորո
քեզի կը հաղորդեմ , քիչ ժամանակէ դ.բ.ճ
իմ բարեյոյս վիճակիս մէջ տեանելու փափաքով :

Մնամ քաղցր տեսութեանդ կարօտ

Երեւան

Ք՞ Հայրդ

1862 Մարտի 25

ԳԱՐԵԳԻՆ

Քոյր իմ Սաթիւնիկ . (Նամակը կամաց կա-
մաց ծալլելով գրպանը կը դնէ) :

ՍԱԹ: Սիրեցեանիդ իմ :

ՍԱՆ: Ուշադիր եղանք հօրս այս նամակին :

ՍԱԹ: Այո՛ , ջերմ փափաքով :

ՍԱՆ: Ա՛րդ , սա երջանկութիւն մը չէ՞ ինձի
համար . անն այսպէս ըլլալու է որդիական սէ-
րը . այս ինչ եռանդուն սէր ուամանց եւ բարո-
յական կրթութեան . ուրեմն եթէ ես ալ որդիական
պարտաւորութիւնս չը ճանաչեմ , ազատութիւն
չեմ գտնէր երկնից անաչառ դատէն . աշխատե-
լու եմ առաքինի հօր մը առաքինի դաւակն ըլ-

լալու . երանելի է ինձ , փառք Արարչիս :

ՍԱԹ . Այո՛ , երանելի ես , երջանիկ ես ազ-
նիւ բարեկամս . գիտնալու ես քեզի ներկայա-
ցած բաղդին յարդը : Ո՛հ . եղնւկ ինձ . . . վնջ
անցաւոր կեանքիս . . . :

ՍԱՆ . Ա՞տ ինչ տեսակ վայ է :

ՍԱԹ . Շատ լաւ կըլլայ որ այսօր գոնէ աս
վնջին չը ծանօթանաս դո՛ւ , սրտակից ընկերս :
Ո՛հ , բոլոր ոսկորներս դողի մէջ ձգեցիր :

ՍԱՆ . Բայց աս ի՞նչ յանկարծակի փոփոխումնք .
մեր է քիչ մ'առաջուան դուարթ հայեցուածքդ
եւ սրտի անպատում ուրախութիւնդ :

ՍԱԹ . Աւնդ , որ այս ժամիս զգացողութիւ-
նըս չը կրցաւ անտարբեր մնալ եւ լռութեամբ
անցնիլ : Այդ սիրաբոյր նամակիդ արձագանք-
ները որտիս խորը թափանցելով , ամեն մէկ բա-
ռը նետի պէս մխտած , այն չը թողին լռութեան
տակ շածկել դաղտնիքս , գոնէ ձեր ուրախու-
թեան ժամին :

ՍԱՆ . Քանի որ իմ հաւատարիմ ընկերակիցս
իր քաղցրաժպիտ այտերը տխրութեան սեւ քո-
ղով կը ծածկէ , պայծառ երկնից դէմքը յան-
կարծակի փսթորկին բերնէն փչած դժոխերես
ամպոց դալ գոցելուն պէս . միթէ ես սիրեց-
եայդ իմ , կրնամ վայրկեան մը գոնէ ուրախ
ըլլալ . — երբէք : Բացատրեցէք զաւերնիդ քոյր
իմ . եթէ չէք ուզեր իս ալ տխրութեան են-
թակայ ընել :

ՍԱԹ: Թողունք այս խօսքը առ այժմ:

ՍԱՆ: Իրարու դեռ նոր ծանօթածի պէս մի
շարժիք. աս ընթացքով խօսք ըլլալու չէ մեր
մէջ. վասն զի քու զաւդ իմս ալ կը սեպուի.
բացատրեցէք, որ փութամք ճար մը գտնելու:

ՍԱԹ: Գժուար խնդիր:

ՍԱՆ: Գժուարն անհնար ըսել չէ:

ՍԱԹ: Բայց պարագաներն երբեմն անհնարին
կրնեն զանի: Ա՛հ քոյր իմ, փայտն է ծնընդ-
եանդ աստղը: դժբաղդ է Սաթինիկը:

ՍԱՆ: Մինչդեռ Սաթինիկը դժբաղդ է, միթէ
Սանդուխտ կրնայ երջանիկ ըլլալ. խօսեցէք,
կադաչեմ, թէ որ ինձմէ գաղտնիք չէք պահեր:

ՍԱԹ: Երբէք. հհ, վերջապէս ստիպեցիր
սիրտս այսօրուրնէ քեզի բանալու:

ՍԱՆ: Ուրախ եմ ապա ուրեմն:

ՍԱԹ: Բայց ի՞նչ համարձակութեամբ յան-
դգնիմ ծնողացս դէմ խօսքի մը մէջ գտնուելու:

ՍԱՆ: Ատանկ վերացեալ խօսքէ բան չեմ
հասկնար:

ՍԱԹ: Ի՞նչպէս գրուցեմ, երբ ծնողքս պատ-
ճառ կըլլան դպրոցական կեանքէս գրկել զիս.
պարզ լեզուով ըսենք, դպրոցէն հանել, եւ
այն ալ այս օրերս:

ՍԱՆ: Պատճառ:

ՍԱԹ: Պատճառն անոնց հարցնելու է:

ՍԱՆ: Աս ի՞նչ նորահնար խօսք, միթէ ա-
նուշիկ Սաթինիկս ինձմէ պիտի բաժնուի. աս-

կէց ետեւ դպրոցին մէջ չպիտի տեսնեմ, որ քովս էք: Եղևկ ինձ ապա ուրեմն . ահա կսկիծ մ'ալ . ողբամ ուրեմն . (Ձեռքն աչքին կը դնէ ու կողբայ):

ՍԱԹ. Ատ կսկիծը, կենդանի մահ է ինձի ազնիւ Սանդուխտս . եւ ահա առ դիւրազգածութեանդ համար էր որ չուզեցի յիշել:

ՍԱՆ. Բայց ի՞նչ է պատճառը, որ եթէ մեղանչած չեմ ըլլար ըսելու, առ անօրէն ծնողքդ տեղի կունենան քեզ դպրոցէն բաժնելու:

ՍԱԹ. Մեծցեր ես ըսելով:

ՍԱՆ. Ատ ի՞նչ մեծութիւն է:

ՍԱԹ. Հասակի:

ՍԱՆ. Ի՞նչ:

ՍԱԹ. Հասակդ լրացեր է, մեծ աղջիկ եղեր ես ըսելով:

ՍԱՆ. (Մեկուսի) Տէր Աստուած, խնդամ թէ լամ աս խօսքին . առ ժամանակին մէջ ալ դեռ ապ մոլոր դրութիւնները պիտի թաղաւորեն ծնողաց մտքին մէջ . հայ ծնողք դեռ առ մըտքին վրայ ապրելու են . նախատինք մարդկութեան . յանցաւոր նախապաշարում . արդիւնք սեւերեւ տղիտութեան . ողբալիւ վիճակ . բայց քոյր իմ Սաթինիկ:

ՍԱԹ. Խօսեցէք:

ՍԱՆ. Հայրդ ալ մայրդ ալ առ խորհուրդին մէջ միարմն են:

ՍԱԹ. Գրեթէ այն:

ՍԱՆ: Չարմանք :

ՍԱԹ: Բայց մանաւանդ մայրս, որուն համար տանը մէջ անցեալ իրիկուն բաւական վէճ ծագեցաւ :

ՍԱՆ: Ի՛նչպէս :

ՍԱԹ: Ես մինչդեռ կաշխատէի հայրս համոզելու, որ այսպէս ուսմունքս թերի, իս դպրոցէն չը հանէ, անդիէն հայիս մայրս փրթաւ եւ այսպէս սկսաւ խօսիլ «Անդամ աղջիկ, ալ կօզաէ ըրածներդ, ի՛նչ հատեր հօրդ միւր կուտես, որ ադ հասակովդ քեզ դպրոցէն չը հանէ. ան ի՛նչ կը խառնուի, տան մը մէջ հայր ըսածդ մանչուն, մայրն ալ աղջկան կը խառնուի. ի՛նչ որ սովրեցար բաւական է. ատկէ անդիս ի՛նչ պիտի ընես, ես ասոր անոր լեզուին բամբասանքի նիւթ չեմ կրնար ըլլալ, որ ան հասակը աղջիկ դպրոց կը դրկէ ըսեմ ու հազար ու մէկ վնջ կարդան. մէկ անգամ մ'ալ աս խօսքը բերանդ չը պիտի առնես. հերիք չէ, այսչափ երթալ դալդ, քիչ մ'ալ տունը հատէ. ի՛նչ, դպրոցի աղջիկերէն չեմ կրնար դատուիլ. այնչափ անմուշ եկան քեզի, ես այսչափ ժամանակ ալ որ հրաման տուեր էի, դիշեր ցորեկ հօրդ խօսածներէն բռնադատուած ըլլալու էր. ասկէց ետեւ հայր, եղբայր մտիկ ընելու ժամանակ չունիմ, ատոնք մեր փորը չեն կշտացներ: ես ի՛նչ որ եղեր եմ, դուն ալ ան եղիր, ես ալ մարդ չեմ. անգամ

մ'ալ ատ խօսքը բերնէդ լսելու չեմ» : Աս
խօսքին վրայ հայրս ալ դարձաւ , թէ աղջիկ ,
մայրդ ինչ որ կըսէ անոր խօսքը մռէ , ես չեմ
խառնուիր : Ահա հոս ամեն մտածմունք կանկ
առնուլ պարտաւորեցան : Արդ նոր ծաղկած մատ-
ղաչ ծառ մը ժամանակէ մը պտուղ տալու
պատրաստուած , առանց խղճին ականջ դը-
նելու զանի պարտիզին մէջ արմատախիլ 'ի
բաց կորզելը Աստուծոյ եւ մարդկութեան դէմ
չը՞ սեպուիր . ինչ դժբաղդութիւն է Սիրեց-
եայդ իմ . պէտք չէր քու հօրդ պէս հայր
մ'ալ ես ունենայի . այս ինչ տարաբաղդու-
թիւն . . . : Թող չապրի ասկէ ետեւ Սաթինիկ :
Սաթինիկ անունը թող ջնջուի ազգահամարիս
մէջէն , բարոյական մահուան բաժակը խմելու
կը պատրաստուի Սաթինիկ . ասիկայ դերութեան
վիճակէն ալ ծանր եկաւ ինձի . ասկէ ետեւ ար-
տասուաց կաթիլները սոսկ կրնան մխիթար ըլ-
լալ տխրազգեաց սրտիս . լաց , ու արտասուէ
թշուառ Սաթինիկ (Աողբայ) :

ՍԱՆ. (Ձեռքը Սաթինիկան ուսին վրայ դնելու)
մի այդչափ կոծեր , սիրելի Սաթինիկս ,
այդչափ վհատութեան տեղի մի տար . խաղա-
ղեցնւր սրտիկդ :

ՍԱԹ. Ո՛չ . ո՛չ . ստիպուած եմ ասկէ ետեւ
տանը սենեակին չորս պատերուն մէջ չոր կեանք
անցունել , դրկուելով դիտութեանց այն ամեն
դասերէն . որ կը ջանայի աս երկու տարուանս

մէջ ձեռք ձգել . ամեն ուսմունքս ալ թերի
 մնացին , ահա կերթամ տգիտութեան փարա-
 խին մէջ տգէտներու հօտին մէջ խառնուելու
 կը դողայ բոլոր մարմինս դաւաղղած յիշողու-
 թիւններէս : Ազգը յառանջ երթալու է կըսուի .
 այս յառաջնթացութիւնըն ինչո՞վ կըլլայ արդեօք .
 երիվարներով , կառքով , — կարծեմ ո՛չ , — այլ ,
 — ազգին ծաղկահասակ դաւակները մանչ ու
 աղջիկ մինչեւ որ չափահաս ըլլան , դպրոցներու
 մէջ կրթելով , բարոյականութեան եւ ուսմանց
 մէջ : Ո՛հ , ինծի համար հիմա տապար առ արմին
 կայ :

ՍՍ.Ն: Աղնիւ բարեկամս :

ՍՍ.Թ: Ուշադիր եմ քեզի սէր իմ :

ՍՍ.Ն: Աս դործին վրայօք փոքր խորհրդա-
 ծութիւն մ'ըրի , ձեր սիրելութեանն ալ հաճոյ
 կը թուի արդեօք :

ՍՍ.Թ: Գովելի եմ ձեր խորհուրդները . խօսե-
 ցէք քոյր իմ :

ՍՍ.Ն: Այս իրողութիւնը սրտիս չափազանց
 կակիծ պատճառեց :

ՍՍ.Թ: Ատ խօսքիդ տարակոյս չեմ կրնար
 ունենալ . մինչդեռ ձեզի պէս աղնուահողի մը
 ճշմարիտ բարեկամ ունենալու պատիւն ունե-
 ցած եմ :

ՍՍ.Ն: Եթէ դամ ձեր ծնողքին անձամբ ա-
 դերս մ'ընելու , օգուտ մը կրնամք քաղել :

ՍՍ.Թ: Ի՛նչ , օգուտ :

ՍԱՆ: Այո՛ . առ մտքէն ետ կը դառնան կը համոզուին արդեօք :

ՍԱԹ: Ամենեւին ոչ , աղէկ չէք ըներ . վաւրն զի ինչո՞ւ համար ասոր անոր գնացեր իմաց տուեր եւ ըսելով , վերջապէս փայտի հարուածները բաժին կը մնան ինձի . հոգ չէ , եթէ վերջը բարի արդիւնք մ'ունենալ կարելի ըլլայ . բայց երբէք : Երեք օրէ 'ի վեր նոյն ինքն իրենց դէմ երեսս 'ի վար ողողած արտասուքի հեղեղները կարող չեղան 'ի գութ շարժել . ահոնք անանկ համոզուած են , թէ կարգալ գիտցողները որչափ որ աւելցան , դէշու-թիւնն ալ այնչափ շատցաւ . այսինքն տղիտութեան վնասները յատեան ելան , եւ մեծ դժուարութիւն կը կրեն իրենց հին մտքովն ապրելու , բայց ինչ օգուտ , որ հորին ջուրը հատնելէն ետքը ջուրին յարգ պիտի տան : Եղնկ ինձ :

ՍԱՆ: Այո՛ , մեր ընտանիքն ալ մայր մը եւ երեք որդի յախտնակամութեան զոհելէն ետքը , հայր մը վերջապէս ձեռքը մնացած դաւկին վրայ կը թափէ ճիգը :

ՍԱԹ: Վայ մեր ազգին . երբէք յառաջադիմութիւն թող չը յուսացուի , մինչդեռ տեսակ մը հարուստը իր որդւոյն մանկութիւնը փայփայելով , պաղ ու տաք հովերէն խնայելով , անոր կամքէն մաղ մ'անդին խոտորիլը օրի-նադանցութիւն կը սեպէ , գիտութեանց հետեւցընելը նախապաշարում կը համարի առ ազգն

ունեցած պարտաւորութիւնները ճանչցնելը անպատուութիւն կը դասէ : Հասարակ ժողովուրդին մեծ մասն ալ, որն ամենեւին դպրոց չը դրկեր, մինչ իրիկուն բոկոտն փողոցէ փողոց կը շրջագայի որդին, անգաստիարակ տըղոց հետ ընկերանալով կըլլայ անկիրթ մարդ մը, լեզուն բոլորովին խանգարուած, միայն ազգին անունը վրան, անոնցմով օր քան զօր տըղէտ խումբը կը բազմապատկի, որն ալ անխորհրդաբար դեռ մատաղ հասակին մէջ, ինչպէս իմ ծնողքս զիս օձիքէս բռնած, դուրս կը հանէ դպրոցէն եւ կը տանի զո՛ն սեւերես տղիաութեան : Ասոնք չեն միթէ թշուառ ազգին անուսում մնալուն պատճառները : Ո՛վ Տէր, երբ պիտի ազատինք այս մտքին չար խորհուրդներէն : Քոյր իմ Սանդուխտ ալ ճար չը մնաց վրաս խօսելու, կարծես թէ քանի մօրէն 'ի մահ պիտի մասնուիմ. վայ է ինձ :

ՍԱՆ: Մի տառապիր սիրեցեակդ իմ :

ՍԱԹ: Եւ ի՞նչպէս, երբ աննման բարեկամէս, սրտակից քոյրէս կը բաժնուիմ :

ՍԱՆ: Ո՛չ, ո՛չ. միայն մահը կարող է բաժնել դմեդ :

ՍԱԹ: Այո՛, բայց այս օրական բաժանումն ալ ծանր պիտի դայ ինձի :

ՍԱՆ: Այդ ծանրութիւնը Սանդուխտ կը ջանայ թեթեւցնելու :

ՍԱԹ: Յուսով եմ, որ հանապաղ ձեր քաղցր տե-

սութենէ չէք դրկեր զիս :

ՍԱՆ: Պատրաստ է Սանդուխտ զքու կեանքդ քաղցրացնելու . եւ քու պէտքդ հոգալու , մէն մ'որ երկինք այս սէրը շաղախեց մեր սրտին մէջ , յաւիտենականութեան մէջ անգամ իրարմէ բաժնուելիք չունինք :

ՍԱԹ: Երջանիկ եմ դարձեալ որ աշխարհի վրայ քեզի նման սիրելի ընկեր մը կուտայ ինձի Երկնից ձեռքը , արժանի ճշմարիտ սիրոյս եւ երախտեացս . փառք Երկնից :

ՍԱՆ: Ատ երջանկութիւնը իմս ալ է նաեւ , Բայց ձայն մը կը լսեմ :

ՍԱԹ: Ի՞նչ :

ՍԱՆ: Կարծեմ նա չար Օրիորդն է որ կուգայ . Տէր Աստուած :



ՎԵՐՁԻՆ ՏԵՍ

ԱՍՏՂԻԿ ԶԱՐՈՒՀԻ ԵՒ ԱՌԱՋԻՆՔՆ

ԱՍՏ: Ահա Ջարուհի , աղէկ պատահմունք . ահա մտ է ըսած օրիորդս :

ԶԱՐ: Սանդուխտը , դրսեցին , այս է :

ԱՍՏ: Այո , եւ ահա Սաթիւնիկն ալ ճիշդ ըսածիս պէս քովը :

ՍԱՆ: Այո , անձանօթ բարեկամ ես եմ Սանդուխտ Օրիորդը : (Աստղիկին դառնալով) եւ շնորհակալ եմ ձեզմէ որ այս բարեկամին ալ իս ծանօթացուցած կերելիք , անչունչտ եղելութեանց ալ :

ՍՍԹ: Այո՛, այն ալ անհանառես եղաւ խա-
րէութեան միջոցին :

ՍՍՏ: Գիտնական Սանդուխտ :

ՍՍՆ: Խօսեցէք անգէտ օրիորդ :

ՍՍՏ: Կորուստ մ'ընե՛նիդ լսելով, անհանգիստ
եղայ, եւ փութացի գտնել ձեզ որ ճշմարտու-
թիւնն իմանամ :

ՍՍՆ : Ատ անհանգստութիւնը ձեզի յատուկ
պատիւ մը կը սեպեմ . ուրեմն խմացիր հիմայ,
Օրիորդ . ճշմարտութիւնը արեգակին կը նը-
մանի որ թէեւ մութ ամպերը անոր վառվը-
ռուն երեսը կուգան կը ծածկեն, բայց մըշ-
տընջենաւորապէս չեն կրնար խափանել, մէյ-
մ'ալ ժամ մը ետքը կը տեսնես, որ առջինէն
գերազանց պայծառութեամբ դաշխարհ կը լու-
սաւորէ : Ուստի կը վստահացնեմ ձեզ որ ատ
կողմէն ապահով ըլլաք :

ՍՍՏ: Կը նայիմ որ միշտ մի եւ նոյն խելքին
վրայ էք :

ՍՍՆ: Ճիշդը եւ դուք . բայց կը ներէք հա-
մարձակութեանս, ուրկէ կուգաք :

ՍՍՏ: Այո՛, ազնիւ օրիորդին հետ ուղղակի
չըջագայելէն :

ՍՍՆ: Լսեցի որ ժամ մ'առաջ աւաղակի մ'ը-
րած գողութիւնը աչքերը բաց իր ձեռքէն մըտ-
քէն չանցնելու պէս կերպով գողցեր են :

ՍՍՏ: Ի՛նչ :

ՍՍԹ: Սուտն իրաւի տեղ կլլեցուցեր են :

ՍԱՆ: Ճերմակին սեւ ըսեր ու հաւատացուցեր են:

ԱՍՏ: Բարեկամ:

ՍԱՆ: Ի՛նչ է չարակամ:

ԱՍՏ: Փափաքիդ հասար:

ՍԱՆ: Այո՛, գողը գողէն դողացեր է:

ՍԱԹ: Աստուած տեսեր զարմացեր է:

ԱՍՏ: Թուղթդ ձեռքդ հասաւ:

ՍԱՆ: Այո՛, այո՛, (նամակը կը ցուցնէ) եւ ահա:

ՍԱԹ: Յանձնարարութեան կողմանէ շատ հաւատարիմ եմ, Ա'ստղիկ:

ՍԱՆ: Բայց ի՛նչ օգուտ որ քո առաջ կարդացուած թուղթը աս չէ:

ՍԱԹ: Թէ եւ ճիշդ աս է այն թուղթը:

ԱՍՏ: Հասկըցայ, հասկըցայ ... բայց առնելիքնիդ ըլլայ:

ՍԱՆ: Տուածիդ պէս կ'առնես միշտ:

ՍԱԹ: Ինչպէս այսօր:

ԱՍՏ: Աչքդ բաց նամակդ գրպանէդ առնելով քեզ ահ ու դողի մէջ ձգելս կօզտէ ինձի. ասկէ ետեւ ճանչցիր ինչ տեսակ մարդ ըլլալս:

ՍԱՆ: Թէ եւ ձեր գովելի ձիրքերուն արդէն ծանօթ էի, բայց սա միայն չէի դիտեր, որ հօրդ այն մարդրտի պէս շարած ոսկիները մերկէ բղխեր են, եւ ահա քաջածանօթ եղայ, — ձեր այսօրուան 'ի գործ դրած արհեստէն, որ հօրմէդ սովրած ըլլալու էք. ապա ուրեմն կեցցէ աւազակութիւն:

ՎԵՐՁ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻ

